ԱԶԳ
AZG
armenian newspaper

Դեկտեմբերի 31, 1991
Երեքշաբթի
եռօրեայ թերթ,
Ա տարի, թիւ 92
գինը՝ 30 կ.

դասիչ՝ 69149
հասցեն՝ Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռախօս՝ 581841
ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243266 SULA SU

Թբիլիսիում արդեն մարտերը ծավալվում են ծայրամասերում

Թբիլիսիում ռազմական գործողությունները ծավալվելով քաղաքի կենտրոնից հասել են այլ շրջաններ։ Ընդդիմությունը հայտարարում է, որ մարտերին ակտիվորեն մասնակցում են չեչեն գրոհայիններ եւ նշանառուներ, որոնք «ТУ-154» ինքնաթիռով ժամանել են Բաքու, իսկ այնտեղից տեղափոխվել Թբիլիսի։ Քաղաքում կան բազմաթիվ զոհեր, սակայն նրանց քանակը պարզել հնարավոր չէ։ Ընդդիմությունը դիմել է *«աշխարհի բոլոր ժողովրդավար ուժերին»* անհետաձգելի օգնության խնդրանքով։ *«Հակառակ դեպքում, ասվում է դիմումի մեջ, Վրաստանի ժողովրդավարությունը դատապարտված է դաժան եւ արյունալի ոչնչացման»։* ■

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մարտահրաւէրների տարի

Տարեվերջի աւանդական հաշուեփակը դժուար է կատարել այս տարի։ Այսուհանդերձ, արագ թուարկումով անհրաժեշտ է անցնող տարեշրջանից առանձնացնել մեր ազգային-պետական կեանքի մի քանի յատկանշական իրողութիւն, ձեռքբերում, որոնք այսուհետ դառնալու են մեր յետագայ կեանքի զարգացման հիմքը։

Առաջին հերթին՝ հողի սեփականաշնորհման պատմանշանակ իրողութիւնը, որն իր անկազմակերպուածութեամբ հանդերձ կարեւորագոյն քայլն էր մեր նոր իշխանութիւնների կողմից՝ հայ գիւղի, հողի պահպանման ուղղութեամբ։

Երկրորդ՝ հանրաքուէով արտայայտեցինք անկախ պետութիւն ունենալու մեր կամքը, համաժողովրդական քուէարկութեամբ ընտրեցինք հանրապետութեան առաջին նախագահին, դրանով իսկ հիմք դնելով մեր նոր պետականութեան, պետական նոր կառոյցների։

Երրորդ՝ մեր քաղաքական միտքը ձեռնպահ մնաց Գնացքից թռչելու մտքից, զգալով, շատ-շատերից առաջ, որ Գնացքն արդէն չի գնում ոչ մի տեղ, այլ կանգ էր առնում ընդմիշտ, եւ հետեւաբար հարկաւոր է պարզապէս հանդարտօրէն վայր իջնել եւ մտածել սեփական Գնացք ստեղծելու մասին։

Չորրորդ՝ արդէն շուրջ երկու տասնեակ երկրներ ճանաչել են Հայաստանը որպէս անկախ պետութիւն, եւ առաջիկայ օրերին կամբողջանայ դրանց շարքը, դուռը լայն բացելով մեր առաջ՝ դէպի ՄԱԿ, դէպի միջազգային ընտանիքի լիիրաւ անդամութիւն։

Եւ հինգերորդ ու թերեւս ամենակարեւորը՝ մեր ժողովրդի վճռականութիւնը՝ դիմանալու ամէն տեսակի զրկանքներին, զոհողութիւններին, ցրտին, մութին, թշուառութեանը, ազերի հորդաներին, ոճրագործութեանը, շրջափակումներին, սրտում վառ պահած ազատ, արդար, բարգաւաճ ապրելու յոյսը։ Եւ եթէ տարուայ գլխաւոր հերոսն ընտրելու սովորութիւնն ընդունուած լինէր մեր մէջ, անկասկած մրցանակը պիտի յանձնուէր մեր ժողովրդին՝ Արցախում եւ Հայաստանում։

Այո, պատմանշանակ իրագործումներ են այս բոլորը, ձեռքբերումներ, որոնք ստիպում են մեզ աւելի մեծ պատասխանատուութեամբ դիմագրաւել դժուարութիւնները, որոնք նոր մարտահրաւէրներ են ազգովին մեր բոլորի առաջ։

Դրանցից առաջինն է Արցախի կնճիռը, որը 1992 տարեշրջանին պէտք է կարողանանք հարթել արդարօրէն, առանց նոր զիջումների։ Եւ դրան հասնելուց առաջ հարկաւոր է դիմանալ, դիմադրել, տա՛լ զգաստացնող հակահարուածը, որ նախապայման է ամէն բանակցութիւնից առաջ։

Երկրորդն է տնտեսական արդար, արդիւնաւէտ, ազատ եւ ազատական համակարգի որդեգրումը, կիրառումը, մղում տալով մեր ժողովրդի ներզօր կարողութիւններին, վերջ տալով վերիվայրոյ, տարերային, գոփողական գործունէութեանը, որ ծաղրն է միայն տնտեսական ազատականութեան։

Երրորդ՝ արտաքին քաղաքականութեան մէջ որդեգրումը հաւասարակշռեալ, շրջահայեաց գործելակերպի, չհակադրուելով մեր բնական միջավայրին, որ Արեւելքն է, որտեղ Հայաստանին է վերապահուած, դարձեալ, քաղաքակրթութիւնների միջեւ ներդաշնակութիւն ստեղծելու առաքելութիւնը։

Եւ չորրորդ՝ ժողովրդավարութեան, իսկական ռամկավարութեան, բազմակուսակցականութեան արմատաւորումը մեր ազգային-քաղաքական, տնտեսական-ընկերային կեանքում, ամբողջովին դուրս մղելով կուսակցական մենաշնորհութիւնը, փակ քաղաքականութիւն վարելու սովորամոլութիւնը, ձեւական ժողովրդավարութիւնը, արժանի դառնալով «Անդրկովկասում ժողովրդավարութեան կղզի» մեր կոչմանը։

Մարտահրաւէրներ՝ որոնք չեն կարող սարսափեցնել մեզ, քանի ազգովին յանձնառու ենք դարձել սեփական ճակատագիրը վճռելու գործին։ ■

Մինսկի գագաթաժողով. լուրջ հակասություններ

Շապոշնիկովը եւս երկու ամսով նշանակվեց գլխավոր հրամանատար

Երեկ Բելառուսի մայրաքաղաք Մինսկում սկսվեց Ընկերակցության կազմի մեջ մտնող Անկախ պետությունների ղեկավարների հանդիպումը։ Ինչպես մեզ հաղորդեցին Բելառուսի Գերագույն խորհրդի մամլո կենտրոնում, օրակարգի մեջ էին մտցվել Ընկերակցության կոորդինացիոն ինստիտուտների մասին, ռազմական հարցերի մասին եւ այլ հարցեր։ Այնուհետեւ պատվիրակությունները սկսել են քննարկել արտասահմանյան պետությունների կողմից վարկերի միջոցով տրամադրված պարենի բաշխման հարցը։ Ըստ մամլո կենտրոնի հաղորդման, առաջարկություն է եղել օրակարգ մտցնել նաեւ Լեռնային Ղարաբաղի իրավիճակի հարցը։ Սակայն ժամ 20-ի տվյալների համաձայն, ադրբեջանական կողմի առաջարկությամբ, այդ հարցի քննարկումը հետաձգվել է։

Ինչպես հաղորդեց Բելառուսի վարչապետ Վյաչեսլավ Կեբիչը, առաջարկություն կա ընտրել 5 հոգուց բաղկացած քարտուղարություն։ Նախօրեին Կեբիչը հաղորդել էր, որ նախատեսվում է որոշում ընդունել ընկերակցության հեռուստառադիոընկերություն եւ հատուկ տպագիր օրգան ստեղծելու մասին։

Բուռն վեճեր են ծավալվել զենքի եւ բանակների հետ առնչվող հարցերի շուրջ։ Ուկրաինան իր խիստ դիրքորոշմամբ հակադրվել է մյուս մասնակիցների կարծիքին։

Ըստ հավաստի աղբյուրների, հայտնի դարձավ նաեւ, որ պաշտպանության նախարար Եվգենի Շապոշնիկովը եւս երկու ամիս կշարունակի միացյալ զինված ուժերի հրամանատարությունը։ Փոխհամաձայնություն է ձեռք բերվել նաեւ ստրատեգիական զենքի պահպանման եւ կառավարման հարցում։ Կողմերը չկարողացան համաձայնության հասնել սովորական սպառազինությունների վերաբերյալ։ Այդ հարցի քննարկումը հետաձգվել է երեք ամսով։ Հետաձգվել է նաեւ հանրապետական բանակների մասին հարցի լուծումը, հիմնականում այն պատճառով, որ սեփական բանակ ստեղծելու համար անհրաժեշտ են հսկայական միջոցներ։

Ինչպես մեզ հավաստիացրին Բելառուսի Գերագույն խորհրդի մամլո կենտրոնից, հանդիպումը անպայման կվերջանա դեկտեմբերի 30-ին, անգամ եթե կողմերը չհասցնեն քննարկել օրակարգում նշված բոլոր հարցերը։

Հանդիպումից առաջ «ԻՖ»-ի թղթակիցները դիմել են Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի ղեկավարներին եւ մարշալ Շապոշնիկովին՝ խնդրելով արտահայտել իրենց տեսակետը ԱՊՀ-ի զինյալ ուժերի հետագա զարգացման եւ ռազմական հրամանատարության հիմնական հարցերի վերաբերյալ։

Բորիս Ելցինը գտնում է, որ զինյալ ուժերի նոր կառուցվածքի կազմավորման համար անհրաժեշտ է անցումնային շրջան։ Դա չի վերաբերում միջուկային զենքին։ «Բանակը, նշեց Ելցինը, *նախկին ԽՍՀՄ-ի չափազանց կարեւոր եւ շատ մեծ օրգանիզմ է, եւ անհնարին է միանգամից այն ցրել։ Ինչ վերաբերվում է Սեւծովյան նավատորմին, ապա այստեղ եւս անհրաժեշտ է լուծել բարդ խնդիր։ Հաշվի առնելով պատմությունը, կարելի է ասել, որ նավատորմը միշտ եղել է ռուսաստանյան։ Սակայն Ուկրաինան նույնպես իրավունք ունի հավակնել այդ նավատորմի իր բաժնին»։*

Խորհրդային Միության միջուկային ուժերի ապագայի մասին *«դեռ պետք է մտածել»*, իսկ ինչ վերաբերում է սովորական սպառազինություններին, նրանք պետք է դառնան Ընկերակցության անկախ պետությունների ազգային բանակների սեփականությունը։ Պատասխանելով Սեւծովյան նավատորմի ապագայի մասին հարցին, Կրավչուկն ասաց, որ անհրաժեշտ է առաջնորդվել հետեւյալ սկզբունքով՝ միջուկային ուժերն անցումային շրջանում դեռ մնում են միացյալ հրամանատարության տակ, իսկ նավատորմի մնացած նավերը պետք է մասամբ մտնեն Ուկրաինայի զինված ուժերի կազմի մեջ։

Արդեն ակնհայտ է, նշեց Ստանիսլավ Շուշկեւիչը, որ ամեն պետություն ձգտում է եւ կունենա սեփական զինված ուժեր, սակայն դա պետք է լինի դանդաղ եւ հետեւողական գործընթաց։ Խոսելով հանդիպման մասնակիցների տարաձայնությունների մասին, նա ասաց, որ դրանք լուծելի են։ Նա անձամբ համոզված է, որ ԱՊՀ-ն ոչ մի դեպքում կորստյան չի դատապարտվի։

Մարշալ Շապոշնիկովը նշեց, որ հույս ունի կանխել բանակի փլուզումը։ Ինչ վերաբերում է ստրատեգիական միջուկային ուժերին, նա ոչ մի խնդիր չի տեսնում այդ կապակցությամբ, քանի որ բոլոր հարցերը լուծվել են Ալմա-Աթայում։

Խոսելով տնտեսական խնդիրների մասին, Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկը դժգոհություն հայտնեց Ռուսաստանի եւ ընկերակցության գործողությունների առիթով։ Ուկրաինան հունվարի 10-ից ազատ է արձակում գները, սակայն մինչ այդ «հուսալի միջոցներ» կձեռնարկվեն, որպեսզի չտուժի հանրապետության տնտեսությունը, ասաց Կրավչուկը։ Անդրադառնալով ռուբլու «գոտուն», Կրավչուկը նշեց, որ այն պատրանք է, քանի որ խախտելով ԱՊՀ-ի դեկտեմբերի 8-ի պայմանավորվածությունը, Ընկերակցությունը հանրապետությանը չապահովեց թղթադրամի անհրաժեշտ քանակով։

Բորիս Ելցինը իրավիճակը բավականին բարդ անվանեց։ Նա ասաց, որ ցանկացած անկախ պետություն իրավունք ունի կուպոններ մտցնել։ *«Ինչ վերաբերում է ազգային վալյուտային, մենք արդեն պայմանավորվել եւ համաձայնագիր ենք կնքել Ալմա-Աթայում»*, նշեց Բ. Ելցինը։ ■


Հը՜, իսկ այդ գուլպան ումն է:

L' EXPRESS, 26 դեկտ.

Մոսկվա, դեկտեմբեր 29.– Կնքվեց ռուս-հայկական պայմանագիրը։

Բեյրութում դարձյալ ինքնաշարժ պայթեց. 15 զոհ, 100 վիրավոր

Մեկ տարվա ընթացքում չորրորդ պայթյունը պատահեց Բեյրութում երեկ կեսօրին, Հարավային արվարձանի (Ադ-Դահիրա) մարդաշատ փողոցներից մեկում, որտեղ գտնվում է իրանամետ Հըզբոլլահի շիա կուսակցության կենտրոնատեղին։ Շուրջ 100 կիլոգրամ TNT հզորությամբ պայթուցիկներով բեռնավորված ինքնաշարժի պայթյունից, որը ղեկավարվում էր հեռավորությունից, զոհվեցին 15 հոգի եւ վիրավորվեցին ավելի քան 100 ուրիշներ, մեծ մասամբ երեխաներ։ Վիրավորների թվում էր նաեւ Լիբանանի նախկին վարչապետ Շաֆիք Ուազզանը, սակայն ոճրարարքը, ըստ նախնական տվյալների նրա դեմ չէր ուղղված։

Ուժգին պայթյունի հետեւանքով հրդեհվեցին կործանվեցին այդ փողոցի վրա գտնվող գրեթե բոլոր շենքերն ու մեքենաները։ Անօրինակ իրարանցման բոցերի ու ծխի մեջ, վիրավորներին օգնության հասնող շտապօգնության եւ հրշեջ մեքենաների առաջ ճանապարհ բացելու համար ոստիկանությունը ըստիպված էր օդում կրակել, էլ ավելի սրելով ընդհանուր սարսափն ու իրարանցումը։

Երեկոյան իր լուրերի բաժնում լիբանանյան պետական ու սեփական մի շարք ռադիոկայաններ ոճրարարքի համար մեղադրեցին Իսրայելի գաղտնի ծառայությանը՝ Մոսադին, որը, ըստ նրանց, դրանով ձգտում է դարձյալ հրահրել միջհամայնքային հակամարտություններ արաբ-իսրայելյան առաջիկա նոր բանակցություններից առաջ։ ■

Շնորհաւոր անկախութիւն

Մահացող Տարուան ընթացքին տեղի ունեցած միջազգային կարեւոր իրադարձութիւններու կողքին, Խորհրդային Միութեան պաշտօնական վախճանը պիտի նկատուի 20-րդ դարու մեծագոյն երեք չորս եղելութիւններէն մէկը:

Մեր դարը ճանչցաւ երկու Աշխարհամարտ, 1914-1918 եւ 1939-1945 ու վկան եղաւ երկու մեծ յեղափոխութիւններու, որոնցմէ երկրորդը եկաւ ջնջելու առաջինը: 1917ի Հոկտեմբերեան Յեղափոխութենէն 75 տարի վերջ, յեղափոխութիւնը կերտող նոյն ժողովուրդները իրենք ջնջեցին իրենց ձեռակերտը: Անոնք ձեւով մը, անձնասպանութիւն գործեցին, որպէսզի կարենան աւերակներու մոխիրներէն յառնել փիւնիկի նման:

Հայաստան այդ մէկ փիւնիկն է:

Ճի՞շդ է, որ Հայոց Հայրենիքը անցեալ 23 Սեպտեմբերին է, որ յայտարարեց անկախութիւնը, զոր ազգովին տօնախմբեցինք: Սակայն կարծես մեր ցնծութիւնը անխառն չէր: Քիչ մը տխուր, անտարազելի զգացումներ եւ մտածումներ բան մը կը զեղչէին մեր ուրախութենէն: Հաւանաբար ան կը յառաջանար Միութեան քաոսային վիճակէն, հանրապետութիւններուն անհամաձայնութիւններէն, ազգամիջեան ճակատագրական բախումներու մտմտուքէն, ու դեռ՝ մութին մէջ բանող անծանօթ դաւադիր ուժերու խլրտումներէն, որոնք մեզմէ կրնային խլել մեր անկախութիւնը, որ իր գործընթացին մէջն էր:

Այսօր, Հայաստանի Հանրապետութեան Նախագահին իսկ բառերով՝ «գործընթացը աւարտած է, Հայաստանը լիակատար անկախ հանրապետութիւն է»:

Շնորհաւո՛ր Անկախութիւն:

Պատմութեան պահանջներով եւ պարտադրանքով - Հայաստան մաս կազմեց Խորհրդային Միութեան, որպէսզի առնուազն պահպանուի մեր կտոր մը հողամասը եւ ափ՛ մը ժողովուրդը վերջնական ոչնչացումէ, զոր ծրագրած էր Թուրքիա: Այսօր պիտի չմտնենք, բնականաբար, պատմութեան բաւիղներուն մէջ, ոչ ալ պիտի թուենք այն բոլոր առաւելութիւնները եւ կորուստները զորս ունեցանք վերջին 70 տարիներուն ընթացքին: Կարեւորը հայրենիքի գոյութիւնն էր, որպէս հանրապետութիւն անոր շարունակութիւնը եւ մեր ժողովուրդին թուական աճը: Այս բոլորը այսօր բացայայտ իրողութիւններ են:

Հայաստան տոկաց, ապրեցաւ եւ այսօր հպարտօրէն աշխարհի դիմաց կը կանգնի որպէս երեքհազարամեայ պատմութեան տէր ժողովուրդի մը անկախ հայրենիքը:

Շնորհաւո՛ր Անկախութիւն:

Այս օրէն սկսեալ, հայը պէտք է տարբեր զգայ, տարբեր գործէ եւ ծրագրէ: Հայրենիքը կը պատկանի հաւասարապէս մեր բոլորին: Անկախութեան ճամբուն վրայ հայ ժողովուրդին արեւմտեան հատուածը տուաւ իր արիւնը, կոտորակուեցաւ երկու երրորդով, դարձաւ սփիւռք ու հոսանքն ի վեր թիավարելով՝ իր ամբողջ ճիգը ի գործ դրաւ որ պահպանէ իր հայութիւնը, որ վառ մնայ հայկական դատը, որ վերապրի հայրենիքը: Հայրենի ժողովուրդը իր կարգին զոհաբերուեցաւ այլ ձեւերով եւ պայմաններու տակ, բայց մնաց կառչած՝ իր հողին, իր աւանդութեան: Եօթանասուն տարիներու ընթացքին մենք բոլորս առաջնորդուեցանք մէկ տեսիլքով եւ մէկ նշանաբանով - մէ՛կ ժողովուրդ, մէ՛կ հայրենիք եւ ազատ ու անկախ մէ՛կ պետութիւն:

Այսօր, որ իրականացած է մեր տեսիլքը, չենք մոռնար անշուշտ Արցախը, ոչ ալ Արցախի մեր եղբայրներուն ճակատագիրը: Ամէն դաշտի յաջողութեան համար, սակայն, անհրաժեշտ է ունենալ օրինական եւ զօրաւոր կռուան մը, որ այժմ Երեւանն է բոլորիս համար: Հայաստանը՝ որուն ձայնը լսելի պիտի դառնայ նաեւ ՄԱԿ-ի բեմերէն:

Շնորհաւո՛ր Անկախութիւն:

Եւ շնորհաւոր Նոր Տարի:

«Պայքար»

Ամանորի գիշերը նույնպե՞ս կլինեն հովհարային անջատումներ

Ամանորը դիմավորում ենք վառելիքաէներգետիկ խոր ճգնաժամի մեջ: Այսօր շատերին է հետաքրքրում, թե ինչպիսի պայմաններում կանցնեն տոները: Այդ նպատակով էլ դիմեցինք «Հայէներգո»-ի կենտրոնական դիսպետչերական ծառայության աշխատակիցներ ***Կարեն Հակոբյանին եւ Միքայել Զաքարյանին***:

«Հայտնի է, որ արդեն երկու ամիս է դադարեցվել են հանրապետության արդյունաբերությունը, ասաց Միքայել Զաքարյանը, որից հետո էլ հովհարային անջատումների պայմաններում էլեկտրաէներգիայի ընդհանուր ծախսը հասնում է մոտ 1500 ՄՎտ, ինչը մեր կայանների միջոցով արդեն դժվարանում ենք բավարարել: Ուստի ստիպված էինք նորից մեծացնել հովհարային անջատումների ծավալը: Երեւանում երկարացրինք եւ ցերեկվա երեք ժամին ավելացավ նաեւ գիշերվա երկու ժամը: Շրջաններում երկու անգամ էինք երեքական ժամով անջատում, այժմ դարձրինք չորս: Երեկվանից Երեւանում սկսեցինք ցերեկը չորս եւ գիշերը՝ 2-3 ժամով անջատել, բայց դա էլ իրավիճակը չփրկեց: Ադրբեջանը փակեց իր գիծը, որից ստանում էինք 200 ՄՎտ: Դա համընկավ մեր վառելիքի ճգնաժամի հետ: Այդ պատճառով մենք դադարեցրինք նաեւ Նախիջեւանի էներգամատակարարումը: ՋԷԿ-ում ստիպված էինք թողնել նվազագույն քանակի հզորություն, որպեսզի ՋԷԿ-երը չսառեն, քանզի դրանց անջատումից հետո գործարկումը պահանջում է ամիսներ: Դրա համար մենք աշխատում ենք նվազագույն չափով մազութ պահել եւ կաթսայատներին մեծ ուշադրություն դարձնել: Այնուհետեւ մեր հսկողության տակ են գտնվում հացի գործարանները, բուժհիմնարկները, հիվանդանոցները, կապի հանգույցները, հեռուստակենտրոնը, ջրամատակարարման կարեւոր օբյեկտները, որոնք պարտադիր երկու սնման գիծ ունեն եւ մենք երբեք զուգահեռ գծերը միանգամից չենք անջատում: Մեկի անջատման դեպքում, աշխատում է մյուսը եւ ապահովվում էներգիայի մատակարարումը»:

– Իսկ ի՞նչ է սպասվում դեկտեմբերի 31-ի լույս 1-ի գիշերը:

– Էլեկտրաէներգիայի մատակարարումը կլինի հատուկ գրաֆիկով, ասաց Կարեն Հակոբյանը: Բայց կաշխատենք ամեն ինչ անել առկա ռեսուրսների հաշվին, որպեսզի Ամանորի գիշերը բոլորին էլեկտրաէներգիայով ապահովենք:

Հիմա, փաստորեն մնացել է մոտ 800 ՄՎտ հզորություն, այն դեպքում, երբ նորմալ պայմաններում սպառումը կգերազանցեր 2000-ից:

Այժմ, ողջ հույսը՝ մազութի հայթայթումն է: «Հայէներգոն» աշխատում է իր բրոկերների միջոցով մազութ ճարել եւ պարտքային եղանակով գնել: Օրինակ, երեկ ստացել ենք 2526 տոննա, բայց սպառել ենք 4300 տոննա, օգտագործելով նաեւ պահեստայինի մի մասը: Եթե այսպես շարունակվի, մի քանի օր հետո ջերմաէլեկտրակայանների պաշարն էլ կսպառվի: Իսկ Սեւանից ջրի բացթողման քանակը 2,5 մլն-ից չի գերազանցում, դա տալիս է մոտ 300 ՄՎտ հզորություն: Մոտ 500 ՄՎտ էլ ստանում ենք հիդրոկայաններից: Փաստորեն, այժմ օգտագործում ենք բոլոր մեծ ու փոքր ՀԷԿ-երը:

Մենք ուղղակի քաղաքացիներին կոչ ենք անում ծածկել բնակարանների ճեղքերը, եթե հնարավոր է նավթով վառարաններ օգտագործել, ինչ-որ ձեւով տաքանալ: Այլապես, էլեկտրասարքերի միջոցով տաքացման ժամանակ, գերբեռնվածությունից բաշխիչ ցանցի կաբելներ եւ տրանսֆորմատորներ են շարքից դուրս գալիս, որոնց վերանորոգումը ավելի մեծ ծախսեր ու ժամանակ է պահանջում: Մի խնդրանք էլ ունենք, որ վթարների դեպքում երեւանցիները «Հայէներգոյի» կենտրոնական դիսպետչերական ծառայություն զանգահարելու փոխարեն դիմեն Երքաղցանցի կենտրոնական դիսպետչերական ծառայություն՝ 52-89-80 հեռախոսահամարով, կամ տվյալ շրջանի էներգաշահագործման բաժանմունք. Հարավային շրջան՝ 44-13-22, 44-16-42, Կենտրոնական՝ 52-64-10, 52-64-72, Հյուսիսային շրջան՝ 25-06-73, 25-08-83, Շահումյանի շրջան՝ 77-59-10, 77-05-10, Խորհրդային շրջան՝ 63-19-10:

Պատրաստեց Հակոբ ԱՍԱՏՐՅԱՆԸ

Ծանր մարտեր. ազերիները ետ են գրավել Կրկժանը

Ինչպես մեզ հաղորդեց «Արցախ» հայրենակցական միության ղեկավարներից մեկը՝ Համլետ Հարությունյանը, Լեռնային Ղարաբաղում դեկտեմբերի 29-ից սկսվել է ընդհանուր հարձակում: Ադրբեջանցիները մեծ ուժերով Շուշիի կողմից հարձակվել են Ստեփանակերտի վրա, մոտ 500 հոգով, տանկերի ու զրահամեքենաների օգնությամբ վերգրավել են Կրկժան ավանը: Ըստ նախնական տվյալների, զոհվել են երկու ազատամարտիկներ, կան վիրավորներ: 29-ի լույս 30-ի գիշերը Ստեփանակերտը ենթարկվել է ռմբակոծության: Նույն օրը անհայտ անձանց կողմից հարձակում է տեղի ունեցել գնդի անցագրային կետի վրա, զոհվել է մեկ զինվոր, մեկը՝ վիրավորվել: Հարձակվողները խլել են երկու ավտոմատ եւ փախել անհայտ ուղղությամբ: Դեկտեմբերի 30-ին ժամը 9-ի տվյալներով դեպի Կրկժան են շարժվել երկու տանկ, երկու զրահամեքենա եւ մեծ թվով զինված ադրբեջանական ջոկատներ:

Այս ժամի դրությամբ ադրբեջանցիները Կրկժանից՝ տանկերով, Շուշիից հրթիռներով գնդակոծում են Ստեփանակերտ քաղաքը:

Ասկերանի շրջանում դեկտեմբերի լույս 30-ի գիշերը ադրբեջանցիները հարձակվել են Քարինտակ գյուղի վրա: Տեղի է ունեցել մարտ: Զոհերի մասին տեղեկություններ չկան, որովհետեւ կապ չկա, իսկ ռադիոկայանների կապը եւ կառավարական հեռախոսակապը մեծ դժվարությամբ է հաջողվում իրականացնել: Նույն գիշերը հարձակում է տեղի ունեցել Մխիթարաշեն գյուղի վրա, որը հետ է մղվել: Դրությունը անկայուն է նաեւ Մարտունու շրջանում: Լույս 30-ի գիշերը ռմբակոծվել եւ գնդակոծվել է Մարտունի քաղաքը:

Ամիրանլարի եւ Ֆիզուլիի կողմից ազերիները հարձակվել են գինու գործարանի վրա եւ գրավել այն:

Դեկտեմբերի 29-ի լույս 30-ի գիշերը կռիվ է տեղի ունեցել նաեւ Ղարաչինար գյուղի եւ ադրբեջանական Շեֆեկ գյուղի միջեւ, որը տարբեր ընդհատումներով շարունակվում է մինչեւ այս ժամը:

ԼՂՀ-ում Գերագույն խորհրդի ընտրություններին, որոնք անցկացվել են շարունակական կրակի տակ, դեկտեմբերի 28-ին, 82 ընտրատարածքներից 70-ում ընտրվել են պատգամավորներ: ■

Ինչ ակնկալիքներ ունենք 1992 թվականից

Մեր թերթի հարցմանը պատասխանում են տարբեր կուսակցությունների եւ մասնագիտությունների ներկայացուցիչներ

Դավիթ Շահնազարյան (ՀՀՇ վարչության անդամ)

– Ակնհայտ է, որ 1992 թվականը կդառնա Հայաստանի Հանրապետության անկախ պետականության կայացման տարի, որի ընթացքում հայոց պետականությունը կդառնա միջազգային իրավունքի առանձին միավոր: Արտաքին հարաբերությունների հարցում մենք արդեն որոշակի հաջողությունների հասել ենք: Ինչ վերաբերում է ներքին քաղաքականությանը, ապա այստեղ դրությունն իսկապես շատ բարդ է եւ տագնապալից: Ես նկատի ունեմ այն սոցիալ-տնտեսական դժվարությունները, որոնք օրեցօր խորանում են եւ որոնց լուծման համար պետք են կտրուկ միջոցներ: Հուսով եմ, որ 1992-ի վերջերին մենք արդեն կզգանք Հայաստանի տնտեսության կայունացման ինչ-որ նշաններ: Մինչ այդ տնտեսական վիճակը հավանաբար առաջիկա 6-7 ամսում ավելի կբարդանա: Արտաքին քաղաքականության ասպարեզում բարիդրացիական հարաբերություններ պետք է հաստատել հարեւան պետությունների եւ նաեւ փլուզված կայսրության հետեւանքով առաջացած նոր քաղաքական միավորների հետ: Բոլոր երեւույթներին զուգահեռ պետք է գտնենք Արցախի գերխնդրի քաղաքական լուծումը: Հայաստանը միջպետական պայմանագիր պետք է կնքի Արցախի հետ՝ այնտեղ երաշխավորելով մարդու իրավունքների պահպանումը: Մյուս բոլոր քաղաքական հարցերը Արցախը պետք է լուծի ինքնուրույն: Նախկին ԽՍՀՄ-ում եւ մասնավանդ Ռուսաստանում շարունակվող խմորումները կարող են ապակայունացման հիմք հանդիսանալ: Դրանք հետեւանքներ կունենան նաեւ մեր հանրապետությունում: Ուստի, պետք է շարունակել այն հասուն քաղաքականությունը, որի շնորհիվ, հանրապետությունը միակը եղավ շրջանում, որտեղ պահպանվեց կայուն քաղաքական իրադրություն: Հուսանք, որ այն կպահպանվի նաեւ 1992-ին:

Մարտիրոսյան (անունը չտվեց, ինժեներ, փախստական)

– Ոչ մի բանի վրա հույս չունեմ: Արդեն մեկ տարի է ապրում եմ, աշխատում, բայց այստեղ ոչ մեկին պետք չեմ, դրա համար էլ ոչ մի հույս չունեմ: Կյանքն այնքան է դժվարացել, որ անգամ ուզում եմ այստեղից մեկնել:

Արմեն Գրիգորյան (կոշկակար)

– Լավ կլինի: Ինձ թվում է, քանի դեռ Լեւոն Տեր-Պետրոսյանն է, ամեն ինչ լավ կլինի:

Մարուսյա Հարությունյան (մանկավարժ)

– Առանձնապես լավ բան չեմ սպասում, բայց պետք է դիմանանք: Ինձ թվում է, լավ կլինի:

Անահիտ Դավթյան (խանութի բաժնի վարիչ)

– Հույսով, հավատով կապրենք: Ամեն ինչ լավ կլինի, ճգնաժամից դուրս կգանք, նորմալ պայմաններում կապրենք: Մենք պետք է կարողանանք դժվարությունները հաղթահարել:

Գաբրիել (հիդրոտեխնիկ, դարձյալ անունը չտվեց)

– Ես կցանկանայի, որ մեր ազգի՝ Ղարաբաղի խնդիրը լուծվեր: Երկրորդը, մեր տնտեսական հարցերը լավ հիմքերի վրա դրվեն: Մեր նոր ղեկավարությունը լավ մտածի տնտեսական հարցեր լուծելիս: Դրանից կախված կլինի նաեւ մեր ապագան: Ես մեր ժողովրդին հաջողություն, ուրախություն եմ ցանկանում: Բավական է, ինչքան տխրեցինք:

Ռուբեն Միրզախանյան (ՌԱԿ հանրապետական վարչության անդամ)

Տնտեսության առումով 1992 թ. ծանր կլինի մեր հանրապետության համար: Իհարկե, դա կապված կլինի նաեւ նախկին ԽՍՀՄ-ում կատարվող իրադարձություններից: Մենք քաղաքականությամբ պետք է առաջնորդվենք մեր տնտեսության զարգացման, անհրաժեշտության դեպքում նաեւ պայքարենք, որպեսզի իրագործվի տնտեսության իրական մասնավորեցումը:

Հուսանք, որ 1992 թվականին կշարունակվի Հայաստանի միջազգային ճանաչումը եւ մեր հանրապետությունը մասը կկազմի միջազգային համագործակցության՝ դառնալով ՄԱԿ-ի անդամ: Ղարաբաղյան ճգնաժամի հետ կապված դժվար է կանխագուշակումներ կատարել: Այդ ուղղությամբ պետք է շարունակվեն քաղաքական ուղիների որոնումը, ավելի ուժեղացվի ինքնապաշտպանությունը, որի համար պետք է կենտրոնացնենք ազգի բոլոր ռեսուրսները: Հուսով եմ, որ մյուս տարի կբարձրացվի նաեւ Հայաստանի պաշտպանության պետական մարմինների պրոֆեսիոնալիզմը: Ինչ վերաբերում է Մինսկի դաշնագրին, ես դրանից լուրջ ակնկալիքներ չունեմ, որովհետեւ լուրջ հակասություններ կան այդ դաշնագրի մեջ մտնող հանրապետությունների միջեւ:

Եւ քաղաքական տեսակետից դա դեռեւս ամուր չէ: Միայն հանրապետությունների միջեւ կայուն տնտեսական կապերի հաստատումից հետո հնարավոր կլինի անցնելու ամուր քաղաքական դաշինքի: ■

Ամանորյա գործադուլ թիվ 151 խանութում

Դեկտեմբերի 29-ին այդ մթերային աշխատակիցների գործադուլի պատճառը թերեւս քաղխորհրդի որոշումն է՝ հունվարի 1-ից խանութը վարձակալությամբ տրամադրելու **«մի կոոպերատիվ ասոցիացիայի՝ հետագա սեփականացման իրավունքով»**: Խանութի տնօրեն Ռուբեն Ղարիբյանը եւ ողջ անձնակազմը ժողովում որոշել են խանութը իրենք վարձակալել եւ այդ մասին տեղեկացրել են համապատասխան մարմիններին: Սակայն, ապարդյուն: Հիմա էլ դիմել են գործադուլի՝ հույս ունենալով, որ այս անգամ օգնության կշտապեն ամանորյա գնումներից զրկված գնորդները: Այլապես, ինչպես խանութի տնօրենը հավաստիացրեց. **«Ժողովրդի ստեղծածը շուտով կդառնա մի քանի մեծահարուստների սեփականությունը, իսկ ինքը՝ ժողովուրդը, կդառնա նրանց ստրուկը: Եւ գործադուլն էլ ունի ավելի շատ սկզբունքային նշանակություն, քան անձնական-խանութային: Մենք զգում ենք վերահաս սոցիալական աղետը, դրա համար էլ դիմում ենք ծայրահեղ միջոցների»**, եզրափակեց տնօրենը:

Հարց է, թե խանութի աշխատողներին իրո՞ք սոցիալական աղետն է հուզում: Մյուս կողմից, գնորդները կպաշտպանե՞ն նրանց: Ինչեւէ, կարծում ենք, որ սեփականաշնորհումը չպիտի կատարվի շահագրգիռ մարդկանց թիկունքում, այն չպիտի վերածվի «հզորի» կողմից «թույլին» ամեն գնով խժռելու պայքարի: ■

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ

Դարավոր պատնեշները հանվում են Հայաստանի սահմաններից, մեր երկիրը նոր-նոր բացվում է աշխարհի առաջ, ինքն էլ հայտնաբերում աշխարհն իր համար: Ի՞նչ հնարավորություններ կան, ովքե՞ր են մեզ շրջապատում եւ ի՞նչ ենք անելու վաղը: Այս մասին է հեղինակի հոդված-առաջարկությունները:

Հյուսիսում, սլավոնական եռյակ միության համաձայնագրերի հիման վրա առաջանում է նոր Միություն` հնարավորին չափ ընդգրկելով նախկին ԽՍՀՄ-ի սահմանները: Սկսված ընթացքին միանշանակ գնահատական տալ հնարավոր չէ: Մի կողմից, դա նախկին Միության անկառավարելի փլուզումը, տնտեսական քաոսն ու ազգամիջյան հակասությունները մեղմացնելու վերջին իրական փորձն է, մյուս կողմից, հաշվի առնելով օրեցօր խորացող սոցիալական, քաղաքական ու տնտեսական ճգնաժամը, պետք է սպասել, որ Միության ձեւավորումը կընթանա մեծ ցնցումների պայմաններում:

Հայաստանը, լինելով այդ միության բաղկացուցիչ մասը, քաղաքական ու տնտեսական կենսական շահերով կապված լինելով մյուս հանրապետությունների հետ, բնականաբար, ներգրավվում է նոր ընթացքի մեջ:

Առաջին անգամը չէ, որ Ռուսաստանը խռովահույզ ժամանակներ է ապրում, բայց ինչպես դա եղել է բազմիցս, նա այս անգամ եւս դուրս կգա ճգնաժամից եւ հավանաբար նորից «մեծ զոհողությունների» գնով: Ուստի Հայաստանը չի կարող հավերժ կապված մնալ «ռուսական սայլերի» հետ: Ռուսաստանի, մյուս հանրապետությունների հետ հնարավորին չափ սերտ կապեր պահպանելով հանդերձ, մենք պետք է ձեռք բերենք այլընտրանքային ուղի, որն անհրաժեշտության դեպքում կապահովի մեր անկորուստ «բաժանումը» հյուսիսային մենաշնորհից: Իսկ եթե այդ շրջանում վերափոխումներն ընթանան բարեհաջող ու առանց համաղետների (կատակլիզմ), ապա մեր քաղաքական ինքնուրույնությունը միայն կնպաստի երկկողմանի կամ բազմակողմանի արդյունավետ ու փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը:

Մեզ համար այլընտրանքային ճանապարհը մուտքն է սահմանակից մյուս շրջան` Միջին Արեւելք, որից հասկանալի պատճառներով Հայաստանը բաժանված է եղել տասնամյակներ շարունակ: Միջին Արեւելքում ընթացք է ստացել խաղաղ կարգավորումը, որը նպատակ ունի մեղմացնելու դիմակայությունը շրջանում եւ ստեղծելու նոր հասարակաքաղաքական մթնոլորտ: Սա, մեր կարծիքով, կխթանի լուրջ ինտեգրացիոն ընթացքին Միջին Արեւելքի երկրների միջեւ` հնարավոր ընկերակցության ստեղծման ուղղությամբ:

Հայաստանը Միջին Արեւելքի օրգանական մասն է եւ չպետք է հեռու մնա այն աշխատանքներից, որ տարվում են շրջանային խնդիրների լուծման ուղղությամբ, մանավանդ որ դրանք շոշափում են մեր կենսական շահերը: Բնականաբար, նման մասնակցությունը հնարավոր է միայն միջազգային լայն ճանաչման եւ հստակ քաղաքական դիրքորոշման պայմաններում: Եթե առաջին խնդիրն աստիճանաբար լուծվում է, ապա երկրորդը կապված է կոնկրետ բարդությունների հետ: Դրանք կարելի է բաժանել երկու մասի: Առաջինը` պատմական անցյալից ժառանգություն ստացած խնդիրների հանգույցն է` կապված 1915թ. ցեղասպանության ու պատմական Հայաստանի տարածքային խնդիրների հետ: Երկրորդը` Միջին Արեւելքում վերջին տասնամյակներում ձեւավորված հակասություններն են, որոնց նկատմամբ Հայաստանը պարտավոր է ունենալ իր դիրքորոշումը:

Կա երկու ճանապարհ, կամ առանձին քաղաքական մեկնակետ ճշտել Միջին Արեւելքի երկրներից յուրաքանչյուրի ու նրանց միջեւ գոյություն ունեցող հակասությունների վերաբերյալ, կամ ճշտել մեկ ընդհանուրը, այն ընդունելով իբրեւ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առանցք Միջին Արեւելքի բոլոր երկրների նկատմամբ:

Գտնում ենք, որ երկրորդ տարբերակն ավելի իրատեսական ու առավել կենսունակ է լինելու: Նախ` յուրաքանչյուր երկրի նկատմամբ առանձին մեկնակետի ճշտումը բավական երկար ժամանակ ու մեծ ջանքեր է պահանջում, որովհետեւ մենք չունենք Միջին Արեւելքի երկրների հետ պետական հարաբերությունների ավանդույթներ, չունենք անհրաժեշտ գիտաճանաչողական հիմք այդ երկրների ներքին քաղաքական կյանքում եւ արտաքին հարաբերություններում անսխալ կողմնորոշվելու համար:

Երկրորդ, սկզբունքների ընդհանուր համակարգի բացակայության պայմաններում Հայաստանը մեծ դժվարություններ կունենա շրջանային կոնֆլիկտների մասնակից երկրների նկատմամբ անհրաժեշտ դրական (ակտիվ) չեզոքությունը պահպանելու հարցում:

Երրորդ, Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի միջեւ լիարժեք հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող խնդիրների մեղմացումը չի կարող իրականանալ շնորհիվ կողմերից մեկի ամբողջական զիջողականության, այլ պետք է իր լուծումը գտնի ընդհանուր շրջանային ընթացքի շրջանակներում:

Չորրորդ, հստակ ձեւակերպված սկզբունքների վրա հիմնված արտաքին քաղաքականությունը հնարավորություն կտա Միջին Արեւելքի երկրներին, Արեւմուտքին եւ Հյուսիսին երկարաժամկետ, հեռանկարային քաղաքականություն մշակել այն երկրի նկատմամբ, որը չի պատրաստվում զարմացնել աշխարհն իր անկանխատեսելի գործողություններով:

Համակարգված քաղաքականությունը երկրի ներսում ու նրա սահմաններից դուրս կլինի մեր հանրապետության կայունության ու ապահովության երաշխիքը: Եւ վերջապես, Հայաստանը հնարավորություն ունի առաջարկելու Միջին Արեւելքում միջպետական, ազգամիջյան հարաբերությունների սկզբունքների ու արժեքների այն համակարգը, որը կարող է դառնալ խաղաղ կարգավորման գործընթացի գաղափարական հիմքը:

Այդ համակարգը, որը պայմանականորեն կանվանենք «Միջինարեւելյան ընդհանուր տուն», իր մեջ ընդգրկում է որակապես նոր բնույթի գործնական քայլերի ու տեսական մշակումների ամբողջություն եւ հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետությանն արագ ու արդյունավետ մուտք գործել Միջին Արեւելք, անհրաժեշտ մակարդակի հարաբերություններ հաստատել շրջանի երկրների հետ եւ աշխատանքներ տանել «Միջինարեւելյան ընդհանուր տուն» մշտապես գործող մարմինների աշխատանքներն իր տարածքում կազմակերպելու նախաձեռնության ուղղությամբ:

Միջին Արեւելքում Հայաստանի կողմից նման նախաձեռնության ստանձնումը հիմնավորված է մի շարք օբյեկտիվ հանգամանքներով: Նախ, հայ ժողովուրդն էթնիկական ու կրոնական ոչ մի ընդհանրություն չունի Միջին Արեւելքի ժողովուրդների հետ: Երկրորդ, Հայաստանը քաղաքական ինքնուրույնության բացակայության պայմաններում նոր ժամանակներում ձեւավորված կոնֆլիկտներին չի մասնակցել եւ որեւէ երկրի նկատմամբ որեւէ բնույթի պարտավորություններ չունի: Երրորդ` Հայաստանի Հանրապետությունը քաղաքական, տնտեսական, մարդկային ռեսուրսների եւ տարածքային տեսակետներից գերտերության հավակնություն չունի եւ առաջիկայում ունենալ չի կարող: Չորրորդ, հայ ժողովրդի առանձին հատվածները բնակվում են Միջին Արեւելքի բոլոր երկրներում: Նրանց անվտանգության ապահովման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետության անկողմնակալության լավագույն երաշխիքն է: Հինգերորդ, Հայ ժողովուրդն իր պատմական անցյալի հետ կապված բարդ խնդիրներ ունենալով հարեւանների հետ, կարող է փոխհամաձայնեցման ու նոր հարաբերությունների օրինակ ծառայել Միջին Արեւելքի համար: Վեցերորդ, Հայաստանի Հանրապետությունն այն տարածքն է, որ արդյունավետ կխաչվեն Հյուսիսի (Անկախ պետությունների միություն) եւ Հարավի (Միջին Արեւելք) տնտեսական շահերը: Յոթերորդ, Հայ ժողովրդի կրոնական յուրահատկությունը (Հայ առաքելական եկեղեցի) հնարավորություն է տալիս հավասարակշռել հուդայական ու մահմեդական գործոնները շրջանում եւ ներկայացնել քրիստոնեական Արեւմուտքի ու Հյուսիսի շահերը «Միջինարեւելյան ընդհանուր տուն» շրջանակներում: Ութերորդ, ավանդականորեն լինելով ռուսական ազդեցության ոլորտում, Հայաստանի Հանրապետությունն անհրաժեշտության դեպքում կարող է Միջին Արեւելքում արդյունավետ ներկայացնել Ռուսաստանի շահերը, որը, հասկանալի պատճառներով, ի վիճակի չէ ներկայումս ակտիվ քաղաքականություն վարել այնտեղ:

Ի՞նչ կտա «Միջինարեւելյան ընդհանուր տուն» ծրագրի իրականացումը Հայաստանի Հանրապետությանը: Նախ, Հայաստանի Հանրապետության կողմից նման սկզբունքների որդեգրումը առաջին փուլում հնարավորություն կտա նրան անարգել մուտք գործել Միջին Արեւելք, հավասարակողմ հարաբերություններ հաստատել Իսրայելի ու արաբական աշխարհի երկրների հետ: Կկարգավորի հարաբերությունները Թուրքիայի ու Իրանի հետ: Երկրորդ, միջազգային հանրությունը կհամոզվի, որ Հայաստանի Հանրապետության մուտքը Միջին Արեւելք ինքնանպատակ, անկառավարելի գործողություն չէ, եւ որ նա չի կանգնեցնի շրջանն ու աշխարհը անկանխատեսելի որոշումների ու գործողությունների փաստի առաջ: Երրորդ, գաղափարական հիմնավորումը ցույց կտա, որ Հայաստանի անկախությունն ու միջազգային ճանաչումը ինքնանպատակ ընթացքներ չեն եւ Հայաստանը կարող է որոշակի դրական դեր խաղալ շրջանային կարգավորման խնդիրներում: Չորրորդ, Հանրապետությունը ձեռք կբերի նոր մտածողություն ու գաղափարներ կրող երկրի համբավ, ինչը կաշխուժացնի նրա հարաբերությունները միջազգային կազմակերպությունների հետ: Հինգերորդ, եթե հանրապետության տարածքում տեղափոխվեն «Միջինարեւելյան ընդհանուր տուն» կառույցները, ապա Հայաստանը ձեռք կբերի քաղաքական անվտանգության կայուն երաշխիքներ, քանզի նրա տարածքում կխաչվեն ինչպես շրջանի երկրների, այնպես էլ մեծ տերությունների քաղաքական, իսկ ընթացքի զարգացմանը համապատասխան` նաեւ տնտեսական շահերը: Վեցերորդ, բարենպաստ դիրք գրավելով Միջին Արեւելքում, Հայաստանի Հանրապետությունը ստիպված չի լինի իր բախտը կապել նախկին ԽՍՀՄ-ում հնարավոր քաղաքական, տնտեսական եւ այլ բնույթի համաղետների հետ: Յոթերորդ, համապատասխան միջազգային դիրքը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությանը քաղաքական, տնտեսական եւ հաղորդակցական փակուղուց վերածվել խաչմերուկի: Ութերորդ, Հայաստանը հնարավորություն կստանա խուսափելու հասարակաքաղաքական անկանխատեսելի հետեւանքներով սպառնացող տնտեսական վերակառուցման փուլից եւ կարճ ժամանակամիջոցում մուտք կգործի գիտատեխնիկական, տնտեսական, մշակութային առաջընթացի համաշխարհային ոլորտը: Իններորդ, նման քաղաքականությունն անխուսափելիորեն կհանգեցնի ներքին կյանքում հասարակական ռեֆորմացիայի, որը պայմաններ կստեղծի որակապես նոր, թարմացած էթնոսի ձեւավորման համար, իր արժանի տեղն ապահովելու համար XXI հազարամյակում:

Տիգրան ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Օգոստոսյան խռովություն. Գերագույն խորհուրդը մեղադրում է շատերին

Օգոստոսյան խռովության հետաքննությամբ զբաղվող նախկին ԽՍՀՄ-ի Գերագույն խորհրդի հատուկ հանձնաժողովի նախագահ Ալեքսանդր Օբոլենսկին դեկտեմբերի 27-ին տեղի ունեցած մամլո ասուլիսում, փաստորեն, հաշվետվություն ներկայացրեց, որը հանձնաժողովը պետք է հանձներ միութենական խորհրդարանին: Օբոլենսկին նշեց, որ, ստեղծված հանգամանքներից ելնելով, հանձնաժողովի հետագա աշխատանքը գործնականապես հնարավոր չէ:

Օբոլենսկին տվյալներ բերեց, որոնք վկայում են խռովության մեջ ՊԱԿ-ի վճռական դերի մասին: Նա հաղորդեց, որ ՊԱԿ-ում անցկացված ծառայողական հետաքննությունը խռովության մասնակից ճանաչեց 32 բարձրաստիճան սպաների: Նրանցից աշխատանքից ազատվել են միայն 7-ը, 6-ը տեղափոխվել են Ռուսաստանի համապատասխան մարմինները, մեկը` գեներալ-մայոր Բուլիգինը, ստացել է ավելի բարձր պաշտոն:

Օբոլենսկին հայտարարեց, որ հանձնաժողովը չի ստացել 1990 թ. նոյեմբերից Բ. Ելցինին ուղարկված ՊԱԿ-ի ամփոփագրերի պատճենները: Այդ տեղեկությունների բնույթը հնարավորություն կտար պատասխանել այն հարցին, թե արդյոք խռովության փորձը նախապատրաստվա՞ծ էր, թե՞ ամեն ինչ տեղի ունեցավ ինքնաբերաբար:

Օբոլենսկին հայտարարեց նաեւ, որ հանձնաժողովի տվյալներով, օգոստոսի 20-ին Անդրկովկասի զինվորական օկրուգի եւ Վրաստանի ՆԳՆ ղեկավարության միջեւ ձեռք էր բերվել խռովությանը աջակցելու միասնական գործողությունների վերաբերյալ պայմանավորվածություն: Նա հաղորդեց, որ գեներալ Վարեննիկովի ծածկագրի համաձայն, օգոստոսի 19-ին գեներալը նախապես ստացել է Լեոնիդ Կրավչուկի եւ Կոնստանտին Մասիկի աջակցությունը, սակայն մեկ վերապահությամբ` նրանք պահանջել էին, որ ԱԴՊԿ-ի գործողությունների օրինականությունը հաստատող փաստաթղթեր ներկայացվեն:

ԽՍՀՄ-ի ռազմաօդային ուժերի ուղղաթիռային զորամասերը մասնակցել են ԱԴՊԿ-ի գործողությունների նախապատրաստմանը, սակայն հրամանատար Եւգենի Շապոշնիկովի օգոստոսի 20-ի կարգադրությամբ այդ գործողությունները դադարեցվել են:

Հանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ ԽՄԿԿ-ի ղեկավարության դերը խռովության մեջ կրավորական չէր: ԱԴՊԿ-ին աջակցելու մասին ԽՄԿԿ Քաղբյուրոյի հայտարարությանը համամիտ էին Ուկրաինայի կոմկուսի առաջին քարտուղար Գուրենկոն, Ադրբեջանի կոմկուսի ղեկավար Այազ Մութալիբովը, Վրաստանի ներկայիս նախագահ Զվիադ Գամսախուրդիան, Թուրքմենստանի կոմկուսի ղեկավար Սափարմուրադ Նիյազովը: Ուզբեկստանի կոմկուսի ղեկավար Իսլամ Քարիմովի քարտուղարությունից հանձնաժողովը պատասխան է ստացել, որ Քարիմովը ծանոթ է եղել այդ հայտարարությանը եւ աջակցել է դրան:

Հանձնաժողովի տվյալներով, այդ հայտարարության հետ չէին համաձայնել Ղազախստանի ղեկավար Նազարբաեւը եւ Էստոնիայի կոմկուսի ղեկավար Սիլարին:

Ալեքսանդր Օբոլենսկին հաղորդեց նաեւ, որ հանձնաժողովը տեղեկություններ ունի ԽՍՀՄ հեռուստառադիոպետկոմի նախկին ղեկավար Լեոնիդ Կրավչուկի մասնակցության վերաբերյալ:

Հանձնաժողովի փոխնախագահ Վլադիմիր Յուդինը հայտարարեց, որ հետաքննության արդյունքներից ելնելով, հանձնաժողովը գտնում է, որ խռովարարներն իրենց ծրագրերում վճռական դեր էին հատկացնում Անատոլի Լուկյանովին: Սակայն հանձնաժողովը համոզված է, որ նա չգիտեր, թե երբ է սկսվելու հեղաշրջումը:

Ինքնասպան Պուգոն մահվան մահճի վրա



ԹԵՀՐԱՆԻՑ ՄԻՆՉԵՒ ՄՈՍԿՎԱ ԵՒ ԱՅԼՈՒՐ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ծնվել է 1948-ին Իրանի Թավրիզ քաղաքում: Միջնակարգն ավարտել է տեղի հայկական դպրոցում: 1970-ին հայրենադարձվել է, 1975-ին ավարտել Երեւանի համալսարանի արեւելագիտության բաժինը: Վերջերս պաշտպանեց թեկնածուականը: Իրանի քաղաքականության եւ տնտեսության վերաբերյալ լույս է ընծայել բազմաթիվ հոդվածներ:

Համաշխարհային աղետի չափ վնաս հասցնող փոթորիկը, որի վաղորդյան զովքը դեռեւս 1985 թ. ապրիլին մեղմ ապտակում էր խորհրդային տերության ժողովրդի դեմքը, չվնասեց միայն Կրեմլին: Համաշխարհային ջրհեղեղից փրկված տապանը այս անգամ փափուկ վայրէջք կատարեց Կրեմլի վրա: Փլուզվեց ողջ Միությունը, սակայն մնաց Մոսկվան՝ աշխարհի սիրտը: Շատ բան փոխվեց: Գաղափարներ տակն ու վրա եղան, արժեքները վերագնահատվեցին, անվանափոխվեցին քաղաքներ, ավաններ, փողոցներ, սրճարաններ... Սահմաններ վերաձեւվեցին, բայց մնաց Մոսկվան՝ աշխարհի սիրտը: Գոմորի պես քարացավ մի սեւ քար՝ Չեռնոբիլը: Բաբելոնյան աշտարակի նման փուլ եկավ մի ողջ տարածք՝ կես Հայաստանը, բայց օգոստոսյան եռօրյա կառնավալից հետո կանգուն մնաց Մոսկվան՝ աշխարհի սիրտը եւ, ի հեճուկս աշխարհի բոլոր սպիտակ տների, վեր խոյացավ մոսկովյան Սպիտակ տունը:

Մեծ քաղաքականության մեջ չկան մեծ ֆիգուրներ: Եթե Գորբաչովն իր միութենական պայմանագրով (ինչպիսին էլ այն լիներ) ընդունելի չէր նորոգ քաղաքականությանը, պիտի ասպարեզ իջներ նրան փոխարինող մեկ այլ ֆիգուր, պայմանագրի սեփական տարբերակով, միայն թե ձեւով նախորդից տարբերվեր, դրանում չլիներ կենտրոն շեշտադրումը, եւ դրա կրողն էլ չլիներ Նորին գերազանցություն Գորբաչովը, այլ մեկ ուրիշ հսկա:

Աշխարհի երկրների խորհրդային դեսպանատներից վայր իջնող կարմիր դրոշի փոխարեն վեր բարձրացող ռուսական դրոշը եւ դրա շուրջը վրանային ճամբար հիշեցնող նախկին միութենական հանրապետությունների արբանյակ-դեսպանատների ի հայտ գալը պետք է բոլորին մտորումների տեղիք տան, արդյոք սա բեմական վերահանդերձավորում չէ՞:

Բնական է, թե ոչ, աշխարհում արդեն պատրաստվում են նախկին միութենական հանրապետությունների հետ չմիջնորդավորված՝ հորիզոնական կապերի մեջ մտնել: Իրանը, նկատի ունենալով հյուսիսում սփռված իր հսկա հարեւանի աշխարհաքաղաքական դիրքը, ուշ-ուշով հետեւում է դեպքերի զարգացման ընթացքին եւ վարելով ակտիվ քաղաքականություն, կամա թե ակամա ներքաշվում է մեզանում ծավալվող գործընթացների մեջ: Մի կողմից, Իրանը կորցնում է իր դիրքերը իբրեւ գերհզոր մի երկրի անմիջական հարեւան, մյուս կողմից, ձերբազատվում այդ հարեւանությունից բխող բոլոր հոգսերից: Չէ՞ որ իշխանատենչ մի հսկայի հետ սահմանակից լինելով, Իրանը մշտապես ենթակա էր վտանգի: Սակայն մեծ ռազմավարական կշիռ ունեցող Խ. Միության հետ հարեւանությունը Իրանին տալիս էր նաեւ միջազգային բացառիկ կարգավիճակ: Բոլոր դեպքերում խորհրդային տարածքում մեծ ու փոքր քաղաքական միավորների ի հայտ գալով՝ Իրանը այսուհետ կարող է ազատ շունչ քաշել, քանի որ նորաստեղծ պետությունները Ռուսաստանի դեմ ստանձնում են միջնորմի դեր: Սակայն Իրանին բնավ էլ ախորժելի չէ իր սահմանների վրա ունենալ այնպիսի լարվածություն, ինչպիսին է հայ-ադրբեջանական կոնֆլիկտը, որն այս կամ այն կերպ անդրադառնում է երկրի առօրյայի վրա: Իրանին առավել քան երբեւէ անհրաժեշտ են կայուն եւ ապահով սահմաններ: Իսլամական հեղափոխությունից հետո Իրանը ձգտում է դուրս գալ քաղաքական մեկուսացումից, սակայն այդ ուղղությամբ Իրանի իշխանությունների կողմից գործադրվող բոլոր ջանքերն առայժմ ցանկալի արդյունք չեն տալիս: Պարսից ծոցի պատերազմից հետո նկատվող դրական տեղաշարժերը, հատկապես շրջանում խաղաղության նոր երաշխիքների ապահովմանն ուղղված համատեղ ջանքերը ձախողվում են: Վերջին շրջանում Թուրքիայի կողմից որդեգրված «թուրքական աշխարհն» իրար միացնող գործոնների մերձեցմանն ուղղված քաղաքականության եւ Խ. Ադրբեջանի նկատմամբ ունեցած հավակնությունների պատճառով բավականին լարված մթնոլորտ է ստեղծվել Թեհրանի եւ Անկարայի միջեւ: Ամերիկյան ռազմական ուժերի ներկայությունն ամրագրող ԱՄՆ-Քուվեյթ պայմանագրի ստորագրումով լարվածություն է ստեղծվել նաեւ Իրան-Քուվեյթ հարաբերություններում: Առայժմ անկայուն են իրանա-ֆրանսիական եւ իրանա-իտալական հարաբերությունները: Աշնանն սպասվելիք Միտերանի այցը Թեհրան չկայացավ Շահպուր Բախտիարի սպանության պատճառով: Իտալիայի վարչապետ Անդրեոտին, որ մտադրվել էր սեպտեմբերին այցելել Իրան, անորոշ ժամկետով հետաձգել է իր այցելությունը:

Իրանին առայժմ ավելի շատ մտահոգում է շրջանի պետությունների, այդ թվում նաեւ Իրաքի հետ քաղաքական հարաբերությունների ապահովման հարցը, սակայն վերջերս Իրաքում երկու իրանցի դիվանագետների սպանությունը էլ ավելի խորացրեց հարեւան պետությունների հարաբերություններում գոյություն ունեցող ճգնաժամը:

Եւ ահա, բազմաթիվ չլուծված հարցերի կողքին, Իրանին սպասում են նոր հոգսեր՝ կապված նախկին Խ. Միության հանրապետությունների, հատկապես նորաստեղծ սահմանամերձ պետությունների հետ: Յուրաքանչյուր խորհրդային հանրապետություն Իրանի համար նոր Ամերիկա է, դեռ պետք է մշակվեն եւ քննարկվեն միջպետական հարաբերությունները կարգավորող բազմաթիվ հարցեր: Առայժմ բոլոր մահմեդաբնակ հանրապետություններից Իրանը բնականաբար առաջինը քաղաքական հարաբերություններ է սկսում Ադրբեջանի եւ Թուրքմենիայի հետ: Օրերս Թուրքմենիա այցելած Իրանի արտգործնախարարի տեղակալ Վաեզի Թաբասին նշեց, որ Իրանը ճանաչում է Ռուսաստանի եւ վեց մահմեդաբնակ (հաղորդագրության մեջ ասված էր՝ վեց միջինասիական) հանրապետությունների անկախությունը եւ հայտարարեց, որ Բաքվում դեսպանատուն հիմնելու նպատակով մոտ օրերս Ադրբեջան կայցելի մի իրանական հանձնախումբ: Անշուշտ, նմանակերպ հանձնախմբեր «հետաքննական» աշխատանքներ կատարելու համար կայցելեն նաեւ մյուս հանրապետություններ, այդ թվում նաեւ Հայաստան: Սակայն Իրանի համար Ռուսաստանը մնում է այն հզոր պետությունը, որը փոխարինելու է եկել Խ. Միությանը եւ Իրանի Իսլամական Հանրապետության իշխանությունների համար առաջնայինը կլինի Մոսկվայի հետ հարաբերություններ զարգացնելու հարցը, քանի որ անցյալում կնքվել եւ կիրառության մեջ են խորհրդա-իրանական բազմաթիվ պայմանագրեր, որոնք մեծ հավանականությամբ կվերածվեն ռուս-իրանական պայմանագրերի, իսկ Իրանը երկրի տնտեսական զարգացման համար մեծ հույսեր էր կապում խորհրդային մասնագետների համագործակցությամբ կառուցվող, մեծ մասամբ ծանր արդյունաբերության, օբյեկտների հետ: Փոքր չէ նաեւ Խ. Միությունից գնվող զենքի ծավալը:

Անշուշտ, մոտ ապագայում Թեհրանում Ռուսաստանի դեսպանատան հարեւանությամբ կբացվեն նաեւ նախկին միութենական հանրապետությունների դեսպանատները, բայց Մեծն Ռուսաստանի դեսպանատան հսկա շենքի ստվերի տակ կնկատվե՞ն, արդյոք, մյուս դեսպանատների հազիվ ծածանվող ազգային-պետական դրոշները: ■

Ծննդյան տոնածառեր են աճում Լիբանանում

Մինչ Ռիմա Շեհադեի ճաշասենյակում գտնվող աշտանակով եւ փյունիկյան բյուրեղապակով հիանում են նրա այցելուները, խունկը ալիքավորվում է թղթյա հրեշտակներով զարդարված նրա 6 մետր բարձրությամբ տոնածառի ճյուղերի միջով եւ մեղմ արեւմտյան երաժշտություն է հնչում: Անկյունում դրված է մի հնադարյան տուփ, որի վրա արաբերեն լեզվով դրոշմված է «Աստված գեղեցիկ է եւ նա սիրում է գեղեցկությունը» ասացվածքը:

Շեհադեն այդ խոսքը սրտով է ընդունել: Մասնագիտությամբ դիզայներ եւ շատ առույգ տիկ. Շեհադեն դրանով փորձում էր փախչել պատերազմի այլանդակություններից, երբ առաջին անգամ նա Ծննդյան տոների առիթով զարդարում էր իսլամ մեծամասնությամբ արեւմտյան Բեյրութում գտնվող իր 19-րդ դարի բնակարանի վերին հարկը: Արդեն 10-րդ տարին լինելով, ծննդյան տոների առիթով Շեհադեի դռնբաց տունը այցելելը Լիբանանի ամենասիրելի սովորություններից է դարձել:

Ամեն տարի, հարյուրավոր մարդիկ Բեյրութից, Տրիպոլիից եւ մինչեւ անգամ հեռավոր Սայդայից խմբերով գալիս են նրա բնակարանը թեյ ըմպելու եւ արաբական քաղցրավենիք հյուրասիրվելու, շրջապատվելով ծաղկյա բարձիկներով եւ պարսկական գորգերով: 50-ամյա սուննի իսլամ Շեհադեն, որ ամուսնացած է քրիստոնյայի հետ, ասում է. *«Ես գիտեմ, որ բոլոր քրիստոնյաները լքել են Բեյրութի այս շրջանը, որը մի ժամանակ խառը բնակչություն ուներ: Այլեւս տոնածառեր չկային, մենք ուզում էինք ապացուցել, որ մեր հարեւանությունը նույնպես շարունակում է սիրել Ամանորի տոնախմբությունները: Մենք ուզում ենք, որ բոլոր հավատքների տեր մարդիկ հանդիպեն մեր տանը եւ փորձեն հաղթահարել բաժանումները»:*

Տիկ. Շեհադեի տանը սկսած Ամանորի առիթով երկշաբաթյա հյուրասիրությունների առաջին օրը այցելեց Մարիամ Քարամեն, իսլամ սուննի վարչապետ Օմար Քարամեի կինը, որն իր օգնականի հետ միասին ժամանելով Շեհադեի բնակարանն ասաց. *«Սա Լիբանանի ամենագեղեցիկ տունն է: Ծննդյան տոները մեզ, իսլամներիս համար նույնն են, ինչ քրիստոնյաների համար, որովհետեւ Ղուրանում Հիսուսը նույնպես մարգարե է ճանաչվում: Մենք նրա ծնունդը տոնում ենք այնպես, ինչպես Մուհամմեդինը»:* Այս տարի առաջին անգամն է, 1975 թվականից ի վեր, որ խաղաղության որեւէ հույս կա, իսկ Լիբանանի իսլամներն արդեն վերադարձել են ծննդյան տոնածառեր, նվերներ եւ ձմեռ պապիկներ գնելու իրենց նախապատերազմյան սովորությանը: Սա միայն լիբանանյան երեւույթ է, որին չենք հանդիպի Մերձավոր Արեւելքի որեւէ այլ երկրում: Բեյրութի շիա իսլամներով բնակեցված Ուզայի թաղամասում գտնվող Հըզբոլլահի կուսակցության կենտրոնատեղիի հակառակ կողմում մի խանութ ծննդյան ծառեր է վաճառում:

Պատերազմի ընթացքում քրիստոնյաներից ավելի, իսլամներն են այցելել Շեհադեի տունը: *«Դժվար էր քրիստոնյաներին մեր բնակարան բերելը: Ճանապարհները փակ էին, նրանք պետք է անցնեին արեւելյան Բեյրութից: Ամուսինս սովոր էր իր բժշկի վկայագրով անցնել ուղեկալներից: Մենք մի անգամ կրակահերթի ենթարկվեցինք նշանառուից: Երբ քրիստոնյաները ժամանեցին մեր տուն, մյուս հյուրերը աստիճանների վերեւում կանգնեցին եւ ծափահարեցին, մենք նրանց իբրեւ հերոսներ ընդունեցինք»*, ասում է Ռիմա Շեհադեն: *«Արդեն մեկ տարուց ավելի է, որ պատերազմն ավարտվել է Լիբանանում, բայց ժամանակ պահանջվեց մինչեւ որ քրիստոնյաներն ու իսլամները կարողանան համարձակություն գտնել իրար այցելելու: Վերջապես ես կարողացել եմ կես քրիստոնյաների եւ կես իսլամների բերել իմ տունը, սա Լիբանանի ճիշտ խառնուրդն է, զգում եմ, որ հասել եմ իմ նպատակին»*, ասում է Շեհադեն:

Երբ տիկ. Շեհադեի տանը հանդիպեցին դեմքերը ծածկած իսլամ եւ ավելի արեւմտականացած կանայք, նրանց շփումները դեռեւս դժվար էին: Երբեմն նրանք իրար ճանաչում էին եւ հիշում իրենց պատանեկան օրերը, որից հետո կրոնական պատճառներով հայտնվել էին սահմանագծի հակառակ կողմերում: Այդ հանդիպումները հաճախ ավարտվում են ողջագուրումներով եւ արցունքներով: Քրիստոնյա մի կին, որը 1975 թ. փախել էր արեւմտյան Բեյրութից, լիբանանյան մի օրաթերթում կարդացել էր Շեհադեի տան Ծննդյան տոնակատարության մասին: *«Իմ տղան կարծում էր, որ արեւմտյան Բեյրութը նշանակում է այլանդակություն, ահաբեկչություն, արյուն եւ կեղտ: Նա չէր ուզում գալ, ես գիտեի, որ միակ միջոցը Շեհադեի տունը այցելելն էր»*, ասում է նա: 17-ամյա այդ տղան, որը երբեք չէր եղել արեւմտյան Բեյրութում, Շեհադեի տան հյուրերի մատյանում գրել է. *«Իմ առաջին հաղորդակցությունը» «դարպասի»* (արեւմտյան Բեյրութ) *հետ, Շեհադեի տան գեղեցկության հետ էր»:*

Շեհադեի «Բեյտը» (արաբերեն բեյտ նշանակում է բնակարան) պատերազմի ընթացքում 6 անգամ վնասվել էր: Տիկ. Շեհադեն եւ նրա ամուսին Նաջիբը, ըստ ռմբակոծումների ուղղության, պատսպարվել են տան տարբեր մասերում: Տիկ. Շեհադեն ամեն օգոստոսին սկսում է ծննդյան զարդարանքների իր ծրագրերը: ■

Թուրգութ Օզալը նախազգուշացրեց Սիրիային

Հյուրրիյեթ, Կահիրե.- Նախագահ Թուրգութ Օզալը, պատասխանելով Լոնդոնում եւ արաբական մի շարք մայրաքաղաքներում հրատարակվող «Ալ-Հայաթ» թերթի թղթակցի հարցերին, Սիրիային մեղադրեց քուրդ ահաբեկիչներին հովանավորելու մեջ եւ այդ առիթով նախազգուշացրեց Հաֆեզ Ասադին:

Օզալը անընդունելի համարեց PKK-ին հովանավորելու Սիրիայի դիրքորոշումը, միաժամանակ հերքեց այն, թե Թուրքիան պատրաստվում է ռազմական գործողություններ ձեռնարկել Սիրիայի հսկողության տակ գտնվող Բեքաայի հովտում տեղակայված ճամբարների դեմ:

Օզալը, անդրադառնալով Սենեգալի մայրաքաղաք Դաքարում Իրանի իսլամական հանրապետության նախագահի հետ ունեցած հանդիպմանը, նշեց, որ ինքը Իրանի տարածքում PKK-ի ճամբարները հայտնաբերելու պահանջ է ներկայացրել Հաշեմի Ռաֆսանջանիին եւ դիմել է նրան այդ ճամբարների վրա հսկողությունը համատեղ իրականացնելու առաջարկով:

Թուրքիայի նախագահը դատապարտելով Սիրիային, թե սա ամեն կերպ ջանում է ժխտել ահաբեկիչների հետ իր կապը, գոհունակությամբ արտահայտվեց այդ հարցում դրական մոտեցում ցուցաբերող Իրանի բարենպաստ դիրքորոշման մասին:

Նա այնուհետեւ շեշտեց, որ այլեւս չի կարող թույլ տալ այն, ինչ տեղի ունեցավ 1990-ի ապրիլին, երբ հազարավոր փախստականներ, խախտելով սահմանը, Իրաքից ներթափանցեցին Թուրքիա: Իսկ Կիպրոսի խնդրի առնչությամբ «Ալ-Հայաթ»-ի թղթակցին ասաց հետեւյալը. «Կիպրոսի թուրքերն ու հույները միմյանցից էթնիկապես, լեզվով եւ հավատքով խիստ զանազանվող ժողովուրդներ են: Նրանց ինչպե՞ս կարելի է միավորել մեկ պետության մեջ, թեկուզ ֆեդերատիվ հիմունքներով: Կիպրոսի խնդիրը, դուրս գալով կղզու շրջանակներից, անպայման կանդրադառնա Թուրքիայի եւ Հունաստանի փոխհարաբերությունների վրա: Հետեւաբար, խնդրի լուծման գործում անհրաժեշտ է դրսեւորել շրջահայացություն»: ■

ԹՈՒՐՔԻԱՆ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՇԵՄԻՆ

Գերխնդիրը քրդական հարցն է

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Ծնվել է 1953-ին, Պոլսում: Նախնական կրթությունն ստացել է տեղի հայկական վարժարանում: 1968-ին ընտանիքով տեղափոխվել են Հայաստան: 1975-ին ավարտել է Երեւանի համալսարանը: Արեւելագետ է, գիտությունների թեկնածու: Թուրքիայի մասին բազմաթիվ հոդվածների հեղինակ է:

Դեկտեմբերի 20-ին կայացած Մեջլիսի վերջին ընտրությունները Թուրքիայում անցան առանց հասարակական կարգի լուրջ խախտումների: Մի հանգամանք, որը աննախադեպ էր երկրի պատմության մեջ եւ քաղաքական լարվածության հետագա թուլացման նախանշանը համարվեց: Սակայն նորընտիր Մեջլիսի 19-րդ գումարման նստաշրջանի բացումը տհաճ անակնկալներ մատուցեց:

Ընդունված կարգի համաձայն, յուրաքանչյուր նստաշրջանի բացումից առաջ Մեջլիսի բակում կատարվող ազգային հիմնի ունկնդրմանը, որին մասնակցում են բոլոր պատգամավորներն անխտիր, այս անգամ չներկայացան Բարօրության կուսակցության նախագահ Նեջմեթդին Էրբաքանն ու այդ կուսակցության ցուցակներով պատգամավոր ընտրված Ալփարսլան Թյուրքեշը: Նրանց պատճառաբանությունը, թե իրենք այդ պահին սպասելիս են եղել Բարենորոգչական ժողովրդավար կուսակցության նախկին նախագահ Այքութ Էդիբալիին, որ պատգամավոր էր ընտրվել նույն ձեւով, ինչ Թյուրքեշը, մեծ զայրույթ առաջացրեց քաղաքական տարբեր շրջաններում: Միտումնավոր խուսափելով մասնակցել ազգային հիմնի ունկնդրմանը, նրանք, փաստորեն, արհամարհում էին Թուրքական հանրապետության գոյությունը, որպես աշխարհիկ պետություն: Նշենք, որ նախքան ընտրությունները Ազգայնական աշխատանքային կուսակցությանը պատկանող թվով 18 պատգամավորներ Ալփարսլան Թյուրքեշի գլխավորությամբ դուրս եկան Էրբաքանի պառլամենտական խմբից եւ դեկտեմբերի 25-ին հայտարարեցին Ժողովրդավար շարժման կուսակցության հիմնադրման մասին: Ըստ ամենայնի, շուտով տեղի կունենա Թյուրքեշի հին ու նոր կուսակցությունների միավորումը մեկ կազմակերպության մեջ:

Ազգային հիմնի միջադեպի առթիվ բորբոքված կրքերը հազիվ էին հանդարտվել, երբ Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցության պատգամավորներ Լեյլա Զանան ու Հաթիփ Դիջլեն, խախտելով արարողակարգը, սահմանադրությամբ հաստատված երդման տեքստի ընթերցումը Մեջլիսում ավարտեցին քրդերեն նախադասություններով, մի անգամ եւս հիշեցնելով, թե Թուրքիայի գերխնդիրը քրդական հարցն է՝ իր բոլոր ընդգրկումներով: Այդ խիստ հանդուգն արարքը մեծ իրարանցում առաջացրեց երկրում: Լեյլա Զանան եւ Հաթիփ Դիջլեն, (որոնք ի դեպ ազգությամբ քուրդ են եւ ընտրվել են Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցության ցուցակով, քանի որ նրանց Ժողովրդական աշխատանքային կուսակցության մասնակցությունը ընտրություններին իշխանությունների կողմից մինչ այդ արգելվել էր քրդական լինելու պատճառով), քաղաքական տարբեր գործիչների, ինչպես նաեւ մամուլի կողմից բացահայտորեն մեղադրվեցին երկրում գերագույն օրենսդիր իշխանության՝ Ազգային մեծ ժողովի ներսում Թուրքիայի դեմ զինված պայքար մղող PKK-ի քարոզչություն ծավալելու եւ որպես գործակալներ ահաբեկչական այդ կազմակերպությանը կամավոր ծառայելու մեջ:

Ահա, շիկացած քաղաքական մթնոլորտի պայմաններում կառավարություն կազմելու պարտականությունը նախագահ Թուրգուտ Օզալի կողմից հանձնարարվեց «Ճշմարիտ ուղի» կուսակցության ղեկավար Սուլեյման Դեմիրելին: Կառավարություն կազմելու աշխատանքները բավականին ծանր ընթացան: Թեեւ «Ճշմարիտ ուղի» կուսակցությունը Մեջլիսում ստացած տեղերի քանակով գերազանցում էր մյուսներին, սակայն դա նրան միակուսակցական կառավարություն կազմելու հնարավորություն չէր տալիս: Իսկ կոալիցիա կազմելու հնարավորությունները համարվում էին բավականին սահմանափակ եւ քաղաքական որոշ շրջաններ, ընտրությունների արդյունքները դեռ չամփոփված, նոր ընտրությունների անցկացման առաջարկ էին անում:

Հենց սկզբից, ընտրություններում տանուլ տված «Մայր Հայրենիք» կուսակցության գլխավոր նախագահ Մեսութ Յըլմազը, հայտարարելով, թե ժողովրդի կամքով է ընդդիմության դերն ստանձնել, հասկացրեց, որ կոալիցիոն կառավարության մեջ տեղ զբաղեցնելու մտադրություններ ամենեւին էլ չունի: Ինչ վերաբերում է իսլամական հայացքների տեր Էրբաքանին ու ազգայնամոլ Թյուրքեշին, ապա Դեմիրելը նախորդ տարիներին, երկու անգամ, նրանց մասնակցությամբ ազգային ճակատի կառավարություն էր կազմել եւ երկու դեպքում էլ մատնվել անհաջողության: Ելնելով այդ փորձից, Դեմիրելը Բարօրության կուսակցությանը, ինչքան էլ դա հավանական էր թվում, կոալիցիա կազմելու առաջարկություն արեց: Փաստորեն, կատարվեց այն, ինչը համարվում էր քիչ հավանական: Կոալիցիոն կառավարության մեջ միավորվեցին Դեմիրելի «Ճշմարիտ ուղի» եւ Էրդալ Ինյոնյուի Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցությունները: Ըստ երեւույթին, կորցնելով կառավարության մեջ տեղ զբաղեցնելու հույսը, Թյուրքեշը որոշեց հեռանալ Էրբաքանի խմբից: Չի բացառվում, որ Թյուրքեշին հետեւի նաեւ Էդիբալին եւ վերջնականապես քայքայվի Էրբաքանի գլխավորությամբ ընտրությունների նախօրյակին կազմավորված «Եռյակ դաշինք»-ը:

Երկու հակադիր կուսակցությունների միավորումը կոալիցիոն կառավարության մեջ, որը, ի դեպ, թուրքական մամուլի տվյալներով, արժանացել է Վաշինգտոնի հավանությանը, պայմանավորված էր Թուրքիայի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներին հրատապ լուծում գտնելու անհրաժեշտությամբ: Հիրավի, «Մայր հայրենիք» կուսակցության կառավարման վերջին տարիներին Թուրքիան հասավ քաղաքական ճգնաժամի շեմին: Կառավարող կուսակցությունը, սպառելով վերոհիշյալ խնդիրների լուծման եւ հատկապես երկրի տարածքային ամբողջականության համար վտանգ ներկայացնող քրդական շարժման կասեցման հնարավորությունները, փաստորեն, անզորության էր մատնված: Այդ առումով պատահական չէ, որ վերջին ընտրությունները, նախատեսված ժամկետից երկու տարի շուտ, անցկացվեցին հենց «Մայր Հայրենիք» կուսակցության որոշումով:

Սուլեյման Դեմիրելը իշխանության գլուխ էր գալիս *«թուրքական պետական ապարատը փակուղուց դուրս բերելու, Օզալի անընդմեջ միջամտությունների հետեւանքով կառավարական մեխանիզմի խափանված գործունեությունը ապահովելու եւ, վերջապես, թուրքական պետության հեղինակությունը, ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրսում վերականգնելու»* հավակնություններով: Ինչ խոսք, այդ ամենն ինքնին ենթադրում է անհապաղ լուծում գտնել քրդական հարցին եւ կանխել հիմա արդեն բացահայտ բնույթ կրող քրդական շարժման հետ անմիջականորեն կապված ահաբեկչությունը, կասեցնել երկրում դրամի արժեզրկման աճը, նաեւ ձերբազատվել Արեւմուտքի կողմից Թուրքիայի վրա մարդու իրավունքների խախտումների պատճառով գործադրվող ճնշումներից:

Իհարկե, այս խնդիրները միմյանց հետ սերտորեն կապակցված են: Գաղտնիք չէ, որ տարեկան 66,9 տոկոսի հասնող դրամի արժեզրկման պայմաններում պետության տնտեսական առաջընթացը, փաստորեն, կանգ է առնում, ահաբեկչության հետ զուգորդվող քրդական շարժման հետզհետե ծավալումը ապակայունացնում է երկրում քաղաքական իրավիճակը, որն էլ ինքնըստինքյան հանգեցնում է կապիտալ ներդրումների կրճատմանը երկրի տարբեր շրջաններում, տվյալ դեպքում հարավ-արեւելքում: Իսկ քրդական հարցը «լուծելու» նպատակով բիրտ ուժի օգտագործումը բնակչության հանդեպ իր հետ բերում է մարդու իրավունքների համատարած ոտնահարման, եւ Արեւմուտքի արձագանքն այդ ոտնահարումներին ավելորդ բարդություններ են առաջացնում, ինչպես օրինակ, Թուրքիայի վարկավորման գործում:

Հաշվի առնելով այդ ամենը, Դեմիրելը, նախ, կաբինետում նշանակեց նոր լիազորություններով օժտված պետական երկու նախարարներ: Դրանցից Օրհան Քիլերջին կաշառակերության ու պաշտոնի չարաշահումները, իսկ Մեհմեթ Քահրամանը մարդու իրավունքների խախտումները կանխելու լիազորություններ ստացան: Բացի այդ նա տարանջատեց նախկինում Էքրեմ Փաքդեմիրլիի միաժամանակ զբաղեցրած փոխվարչապետի եւ տնտեսական գծով պատասխանատու պետական նախարարի պաշտոնները: Փոխվարչապետի պաշտոնում նշանակվեց Էլդար Ինյոնյուն, իսկ թուրքական տնտեսության ղեկը հանձնվեց դոկտոր պրոֆեսոր Թանսու Չիլլերի տնօրինությանը: Կարծում ենք, ավելորդ չէ նշել, որ տիկին Չիլլերը քաղաքական ասպարեզ է իջել Դեմիրելի առաջարկով: Գերմանական մամուլը հանձինս պետնախարար Չիլլերի, տեսնում է ապագայի վարչապետի:

Մարդու իրավունքների գծով պետնախարարի նշանակումով Թուրքիան քրդական հարցի միջազգայնացմանը զուգահեռ Արեւմուտքի հետզհետե ուժեղացող ճնշումներին դիմակայելու իրավական հիմք է ստանում: Դրա հետ կապված, Դեմիրելը նպատակահարմար գտավ պաշտոնապես ընդունել բանտարկյալների հանդեպ Թուրքիայում խոշտանգումների կիրառման իրողությունը, ստուգումներ անցկացրեց Էսքիշեհիրի տխրահռչակ բանտում, հայտարարելով, թե այդպիսի կալանավայրերով Թուրքիան համաշխարհային հասարակայնության առաջ դուրս գալ չի կարող: Դեմիրելի նորաստեղծ կառավարությունը հաստատեց նաեւ կոալիցիայի երկու կուսակցությունների միջեւ մինչ այդ համաձայնեցրած քրդական բանաձեւը, որի բովանդակությանը անդրադարձել էինք նախորդ համարներում: Միայն ավելացնենք, որ մշակույթի նախարար Ֆիքրի Սաղլարի խոսքերով՝ քրդերին վերապահվում է նաեւ ազգային թատրոն ունենալու իրավունք: Քրդական բանաձեւի անմիջական արդյունքը եղավ այն, որ PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը հայտարարեց ահաբեկչական գործողությունները Թուրքիայի դեմ ժամանակավորապես դադարեցնելու մասին:

Մեջլիսում վստահության քվե ստանալուց դեռ մեկ շաբաթ չանցած, Դեմիրելը, փոխվարչապետ Ինյոնյուի հետ միասին, շրջագայություն կատարեց Թուրքիայի քրդաբնակ հարավ-արեւելյան շրջաններում: Հանդիպումներում նա մասնավորապես նշեց, որ իր կառավարությունը դատապարտում է խտրականության ամեն մի դրսեւորում բնակչության հանդեպ եւ հավատարիմ է մնում քաղաքացիների իրավահավասարության սկզբունքին, անկախ ազգային պատկանելությունից: Եղան նաեւ շրջանի տնտեսությունն աշխուժացնելու, բնակչության վիճակը բարելավելու խոստումներ:

Նորաստեղծ կառավարության գործնական մոտեցումը Թուրքիայում լուրջ մտահոգությունների պատճառ դարձած խնդիրներին ու աշխույժ գործելակերպը նպաստեցին երկրում Դեմիրելի ժողովրդականության աճին: Միաժամանակ, նրա դիրքերը Մեջլիսում զգալի ամրացան: Բավականին լավ տպավորություն գործեց նաեւ կառավարության որդեգրած արտաքին քաղաքականության կուրսը, որն ունի հետեւյալ առանձնահատկությունները. վերջ տալ ընդհանուր շուկային անդամակցելու նկատառումներով Արեւմուտքի առաջ մեծապես զիջումների գնալու քաղաքականությանը, հավասարակշռել պետության քաղաքական ուղղվածությունը ԱՄՆ-ի եւ եւրոպական երկրների միջեւ, հրաժարվել հետապնդվող նպատակների իրագործմանը, կապված եւրոպական ընկերակցություն ներթափանցելու միտումների հետ, Վաշինգտոնի միջոցով հասնելու գործելակերպից: Կառավարությունը, ինչպես այդ մասին պաշտոնապես հայտարարվել է, իր առաջ խնդիր է դրել ջնջել այն տպավորությունը, թե Թուրքիան ծառայում է Վաշինգտոնի քաղաքական ծրագրերին, բարձրացնելով դրանով պետության վարկը միջազգային ասպարեզում:

Եթե չհաշվենք այն ձգտումը՝ ավելի անկախ քաղաքականություն վարել ԱՄՆ-ի հանդեպ, քան Օզալը, միաժամանակ զգալիորեն բարելավել փոխհարաբերությունները Արեւմուտքի մյուս երկրների հետ, ապա կարելի է ասել, որ Դեմիրելի կառավարության ծրագրերը արտաքին քաղաքականության բնագավառում նախորդներից էապես շատ չեն տարբերվում: Դեմիրելը նույնությամբ հետեւում է նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հարաբերությունների զարգացման կուրսին, լիովին հավանություն է տալիս Օզալի նախաձեռնության արդյունքը հանդիսացող «Սեւծովյան համագործակցության» ծրագրին: Դեռ ավելին, անկախություն հռչակած միութենական բոլոր հանրապետություններին միաժամանակ, առանց խտրականության ճանաչելու որոշումը կայացնում է՝ հետեւելով Օզալի առաջարկին: Հիմնականում համընկնում են նաեւ Դեմիրելի ու Օզալի մոտեցումները քրդական հարցում: Ինքնին քրդական բանաձեւի ընդունումով, որով Թուրքիան պաշտոնապես ճանաչեց քրդերի գոյությունը երկրում որպես էթնիկական ընդհանրություն, փաստորեն, կառավարությունը իրավական հիմքերի վրա է դնում քրդական հարցում առկա տաբուն վերացնելու Օզալի նախաձեռնությունը: Սակայն դա ոչ այնքան տաբուի վերացման Օզալի նախաձեռնության կամ էլ հարցի ակտիվ Արեւմուտքի կողմից Թուրքիայի վրա գործադրվող ճնշումների, այլ քրդական շարժումը ուժի միջոցով ճնշելու նախկին կառավարության փորձերի սնանկության հետեւանքն է: Թեեւ հենց նախորդ կառավարության կողմից շարժման ծավալումը կասեցնելու միջոցների սպառումը ստիպում էր Օզալին հանդես գալ անգամ Քրդական Ֆեդերացիայի հարցը քննարկելու պատրաստակամությամբ: Դեմիրելը դա մերժեց, պատճառաբանելով, թե *«Թուրքիայի տարածքային ամբողջականության հետ առնչվող ոչ մի հարց չի կարող քննարկման ենթակա լինել»*: Սակայն դա չէր կարող խոչընդոտ հանդիսանալ Օզալ-Դեմիրել մերձեցման համար:

Առհասարակ քրդական հարցի լուծման ընդունելի ձեւը Դեմիրելի համար վավերացված բանաձեւով նախատեսվող «մշակութային ինքնավարության» տրամադրումն է քրդերին: Իրենց հերթին, քրդերը ամենեւին էլ մտադիր չեն բավարարվել վերոհիշյալ բանաձեւով: Ներկայումս նրանք փորձ են անում զինված պայքարին զուգահեռ շարժումը փոխադրել սահմանադրական հիմքերի վրա՝ լեգալ գործունեության իրավունք պահանջելով քրդական քաղաքական կուսակցության համար: Վերջերս Անկարայում տեղի ունեցած Ժողովրդի աշխատանքային կուսակցության արտակարգ համագումարը, որի պատվավոր հյուրն էր PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանի մայր Էսմա Օջալանը, մի տեսակ մարտահրավեր էր քրդական հարցի ուղղությամբ կառավարության ձեռնարկած միջոցներին: Ըստ երեւույթին, Դեմիրելը հստակ որեւէ ծրագիր քրդական շարժման դեմ չունի: Նրա քրդական քաղաքականության էությունը երկրի հարավ-արեւելյան շրջաններում բնակչության վիճակը բարելավելը, նրա եւ պետական իշխանության մարմինների միջեւ գոյացած անջրպետը վերացնելը, PKK-ին զանգվածների, հիմա արդեն իրողություն դարձած, աջակցությունից զրկելու միջոցով մեկուսացնելը, պետանվտանգության ուժերը ահաբեկիչների վրա կենտրոնացնելն է:

Քաղաքական մի շարք հարցերում հանրապետության նախագահի ու վարչապետի կարծիքների համընկնումը թուրքական մամուլի կողմից գնահատվեց որպես հանդուրժողականության դրսեւորում միմյանց հանդեպ եւ համերաշխության հաստատում քաղաքական ուժերի միջեւ: Հիրավի, Օզալ-Դեմիրել առճակատման հետագա սրումը, որ մտավախությունների տեղիք էր տալիս երկրում, պատճառ կդառնար Թուրքիայում քաղաքական մթնոլորտի շիկացմանը: Սակայն նկատվող երկուստեք հանդուրժողականությունն ու համերաշխության հաստատումը քաղաքական շրջաններում պայմանավորված չեն Օզալի ու Դեմիրելի միջեւ այս կամ այն հարցի շուրջ կայացած փոխհամաձայնությամբ: Ընդհակառակը, կենսական բնույթի այդ հարցերն են եւ հատկապես քրդականը, որ փակուղու առաջ են կանգնեցրել նախորդ կառավարությանը, դառնալով վաղաժամկետ ընտրությունների անցկացման գլխավոր պատճառներից մեկը, եւ հիմա էլ նպաստում են Օզալ-Դեմիրել առճակատման հաղթահարմանը:

Սուլեյման Դեմիրելը, կառավարության ձեւավորումից հետո հրաժարվեց նախագահ Թուրգուտ Օզալին պաշտոնանկ անելու մտադրությունից, որի մասին ինքը բազմիցս նշել էր ընտրարշավի ժամանակ եւ պատճառաբանեց, թե *«դա չի նպաստի կենսական հրատապ խնդիրների լուծմանը»*: Դրանց մեջ գերխնդիրը քրդական հարցն է: ■

Նկարների գողությունը եկամտաբեր է

Թույլ օրենքների հետեւանքով եւ աստղաբաշխական գներ առաջարկող «մոլի» գնորդների մեղսակցությամբ արվեստի գործերի հափշտակումը սպառնում է «դատարկել» թանգարանները եւ մարդկությանը զրկել հոգեւոր ժառանգությունից:

● 1990 թվականի փետրվարի 2-ի գիշերը դիմակավոր անձնավորություններ, հանկարծակիի բերելով 6 անզեն պահակներին, Հերկուլենիումի պահեստասենյակներից մեկում գողացան 223 թանկարժեք իրեր: Ընդհանուր գումարը գնահատվում է 18 միլիոն դոլլար:

● 1991 թվականի ապրիլի 14-ի գիշերը զինված ավազակները, անջատելով Ամստերդամի Վան Գոգի անվան պետական թանգարանի ահազանգային ազդանշանները, կարողացան դուրս հանել հոլանդացի մեծ վարպետի վրձնին պատկանող 20 նկար: Միայն ավտոմեքենայի փչացած անվադողի հետեւանքով գողությունը բացահայտվեց: 35 րոպե հետո հայտնաբերված «ավարի» մեջ էր գտնվում հայտնի «Կարտոֆիլ ուտողները», որն արդեն մի անգամ, 1988-ին, գողացվել էր մեկ ուրիշ թանգարանից: Ավարի ընդհանուր արժեքը գնահատվեց մոտ 500 միլիոն դոլլար:

● 1991 թվականի հունիսի 11-ին 3 անմեղ թվացող «թափառականներ» սողոսկեցին Ցյուրիխի Մաքս Բոլագ պատկերասրահը: Մինչ երկուսը խոսակցության բռնվեցին տնօրենի հետ, երրորդին հաջողվեց Պաբլո Պիկասոյի նկարներից 2 կտավ թեւի տակ դնել եւ աննկատ դուրս գալ: Արժեքը՝ 41 միլիոն դոլլար:

Աշխարհի արվեստի գանձերը սպառնալիքի տակ են: Նյու Յորքից մինչեւ Պնոմ-Պեն, Թուրքիայի անցյալի ավերակներից մինչեւ Ամստերդամի նորագույն թանգարանները կողոպտիչները չեն խնայում ոչ մի մասունք, եւ մարդկության մշակույթի թանկարժեք վավերագրերը բավականին արագ թափով անհետանում են:

Արվեստի գործերը միշտ էլ խոցելի են եղել: Ժամանակն իր ավերածությունները գործել է անխափան: Որմնանկարները սեւացել են, սֆինքսը մաշվել, ամբողջ քաղաքակրթություններ անհայտ կորել են, սակայն արվեստի գործերի նկատմամբ ագահության համաճարակը, որ վերջին շրջանում խիստ լայն տարածում է գտել, անցնում է ամեն չափ ու սահման:



Ռենուարի «Լողացողը ժայռի վրա հանգստանալիս» նկարը մեկն է այն իմպրեսիոնիստական 9 կտավներից, որոնք 1985 թվականին գողացվեցին Փարիզի Մարմոտան թանգարանից: Միջազգային հետախուզության ջանքերի շնորհիվ այս տարի այն վերադարձվեց թանգարանին: Ավազակներից մեկը ավտոմեքենաների ֆրանսիացի հայտնի հափշտակող էր, մյուսը թմրադեղերի ճապոնացի վաճառող:

Արվեստի սիրահարները դեռեւս չեն կարողանում ուշքի գալ այն «տպավորիչ» հափշտակությունից, որը 20 ամիս առաջ տեղի ունեցավ Բոստոնի Իզաբելա Ստյուարտ Գարդներ թանգարանում, որտեղից, որպես ոստիկան ծպտված երկու ավազակներ պահակներին կապկպելուց հետո դուրս էին հանել 3 Ռեմբրանդ, որոնց թվում 1633-ին նկարված «Փոթորիկ Գալիլեայի ծովում», 5 Դեգա, մեկ Մանե եւ Ժան Վերմեերի «Համերգը», որն աշխարհում այդ հեղինակի ընդամենը 36 կտավներից ամենանուրբ երանգավորումներ ունեցող բարձրարժեք ստեղծագործությունն է: Կտավն անգթորեն կտրված էր շրջանակից՝ ներկի հետքեր թողնելով հատակին: Երեք ժամվա ընթացքում 200 միլիոն դոլլար արժողությամբ անփոխարինելի գլուխգործոցները անհետացել էին: Այն իր տարողությամբ աննախընթաց էր, բայց ոչ եզակի դեպք, քանի որ նմանօրինակ հափշտակումները դարձել են ավազակների «նախասիրած մարզաձեւը»:

Եւ ինչու չդառնան, երբ այդ կտավների եւ հին աշխարհի մասունքների նկատմամբ որոշ մարդկանց ունեցած անհագ պահանջը անբեկանելի չափերով օրեցօր բարձրացնում է դրանց գները: Նյու Յորքում տեղադրված ոչ շահութաբեր արվեստների ուսումնասիրման միջազգային հաստատության տնօրեն տիկ. Կոնստանս Լոուենթալը նշում է, թե *«Ամերիկյան կառավարության հաշվումներով, արվեստի գործերի կողոպուտները տարեկան 2 միլիարդ դոլլարի եկամուտ են ապահովում այդ գործով զբաղվողներին»:* Բրիտանական «Trace» ամսագրի տվյալներով, այդ թիվը կարող է հասնել մինչեւ 6 միլիարդ դոլլարի:

«1988-ից մինչեւ 1990 թվականը արվեստի գործերի հափշտակումները 300 տոկոսով ավելացան Նյու Յորքում», ասում է Ալեքս Սաքոն, այդ գործով զբաղվող հատուկ դետեկտիվներից մեկը: Եգիպտոսը, Թուրքիան, Հունաստանը, Իտալիան եւ մի շարք լատինաամերիկյան երկրներ տառապում են այն հեռանկարից, որ կարող են մի օր ամբողջովին զրկվել իրենց մշակութային ժառանգություններից:

Վերջին քսան տարիների ընթացքում Իտալիայում, օրինակ, գրանցվել է 253 հազար արվեստի իրերի գողություն, որոնց կեսը տեղի է ունեցել երկրում գտնվող 95 հազարի հասնող եկեղեցիներից, որոնք շատ վատ են պաշտպանված: Միայն անցյալ տարի ավելի քան 60 հազար իրեր (յուրաքանչյուրն առնվազն 10 հազար դոլլար) անհետացել են ընդհանրապես Եւրոպական Համայնքի երկրներից: Տարեկան մոտ 5000 կտավներ հափշտակվում են Անգլիայում:

Այս թվերը պաշտոնապես արձանագրվածներն են: Իրականում պատկերը շատ ավելի մռայլ է, այն աստիճան, որ ամերիկացի քննիչներից մեկը երեւույթը կոչում է «պատմության բռնաբարում»:

Խիստ շահավետ նախաձեռնություն: Եթե առաջներում հափշտակումները կատարվում էին արվեստի սիրահարների կողմից, ապա այժմ նրանց շարքերին ավելացել են նաեւ թմրադեղերի առեւտրով ու կազմակերպված ոճրագործություններով զբաղվողները: Եւ սա հասկանալի է, քանի որ այս դեպքում եւս պահանջարկը գալիս է «մոլի» դարձած ամբոխի կողմից:

Անձնական հավաքածուների տերեր, աճուրդի սրահներ եւ նույնիսկ թանգարանների տնօրեններ պատրաստ են «աչք փակել» օրենքի առաջ եւ ձեռք բերել այդ մասունքները՝ գիտակցաբար թե անգիտակցաբար: Սոթբիի եւ Քրիստիի նման հռչակված աճուրդի սրահները քանիցս արատավորել են իրենց անունները՝ կասկածելի ծագում ունեցող ցուցանմուշներ ներկայացնելով իրենց հաճախորդներին: *«Այդպիսի նմուշների ամենամեծ գնորդներից մեկը Նյու Յորքի Մետրոպոլիտեն Արվեստի թանգարանն է»*, նշում է Չարլզ Կոսկյան՝ Ամերիկյան մաքսատան նախկին աշխատակիցը, որը 14 տարի զբաղվում է արվեստի գողությունների հետազոտությամբ: Բարձրաճաշակ Թոմաս Հովինգը, որ տասը տարի շարունակ ղեկավարել է այդ թանգարանը, չի թաքցնում, որ ինքը զբաղվել է «ծովահենությամբ»:

Բրիտանացի քննիչները գրեթե համոզված են, որ Կարավաջոյի «Ծնունդ» (1609, 2 անգամ 3 մետր) կտավի հափշտակումը 1969 թվականին Պալերմոյում, մաֆիայի ձեռքի գործն է: Այն գնահատվում է մոտ 50 միլիոն դոլլար: Մինչդեռ Քենեթ Կլուգը՝ ամերիկացի մաքսատան աշխատակիցը, վստահեցնում է, որ Կոլումբիայի Մեդելին կարտելի թմրադեղերի արքաները իրենց առանձնատներում պահում են արվեստի տասնյակ թանկարժեք գործեր: Անեկդոտներ են շրջում նաեւ, որ, ի վերջո, գողացված այդ իրերը հայտնվում են ճապոնացի մագնատների ձեռքերում: Նշենք, որ 1984-ից 1990 ընկած ժամանակահատվածում ճապոնացիների կողմից գնված «ներմուծված նկարների» ընդհանուր գումարը տարեկան 223 միլիոն դոլլարից հասել է 3,65 միլիարդ դոլլարի՝ այսինքն աճել է 16 անգամ:

Հեշտ է, երբ ձեւը գիտես: Ռիսկը փոքր է, վաճառելը՝ հեշտ: Որեւէ գողացված իր կարելի է որոշ ժամանակով «սառեցնել», ասենք, Շվեյցարիայում, որն այդ ապրանքների պահեստավորմանը վերաբերվում է այնպես, ինչպես կվերաբերվեր բանկային հաշիվների գաղտնապահությանը: Իսկ հետագայում այն կարող է ազատ դուրս գալ Ցյուրիխի կամ Ժնեւի ազատ նավահանգիստներից: *«Այնտեղ ոչ ոք ձեզ հարց չի տալիս: Այդ նավահանգիստները աշխարհի խոշորագույն անտիկ ապրանքների վաճառախանութներն են»*, խոստովանում է Քրիստի աճուրդի սրահի Ժնեւի մասնաճյուղի տնօրեն Դեն Կլեյնը:

Նույնիսկ որոնման համատեղ ջանքերը ցանկացած արդյունքը չեն տալիս: Իսկ անցյալ ապրիլին տեղի ունեցած Վան Գոգի հափշտակումը հուսահատեցրեց շատերին, քանի որ Ամստերդամի թանգարանը համարվում էր Եւրոպայում ամենաապահովը: Այն հագեցած է էլեկտրոնային համակարգիչներով, հատուկ փականքներով, հեռուստատեսային էկրաններով եւ ժամանակակից այլ սարքավորումներով: Բռնված չորս կասկածելի անձնավորություններից երկուսը պայմանագրային կարգով աշխատող թանգարանի պահակներն էին, որոնցից մեկը, պարզվեց, հափշտակման օրը հերթապահում էր:

Փարիզի Գրան Պալե թանգարանը այս տարվա սկզբներին մեկ միլիոն դոլլարից ավելի ծախսեց անվտանգությունն ուժեղացնելու նպատակով: Այնուամենայնիվ, մայիսի 29-ին Սյորայի մի փոքրիկ կտավ անհետացավ, նախքան պահակները կսկսեին իրենց ստուգայցը: Նրանք հետագայում ահազանգի ազդանշանները անջատված գտան:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1979-ից 1989 թվականը Ֆրանսիայում տեղի ունեցած հափշտակումների մեծ մասը կատարվել են պահեստներից, առանց ուժի գործադրության: Գողացված իրերի մեծ մասը նույնիսկ ցուցակագրված էլ չի եղել: Անցյալ տարի Փարիզի Աստվածամոր տաճարի վերականգնողներից մեկը զարմանք էր արտահայտել՝ լսելով նյույորքցի մի զբոսաշրջիկի խոսքերն այն մասին, թե Վիոլե Լը Դյուկի ճարտարապետական գծագրերը ցուցադրված են Վաշինգտոնում: Դրանք Փարիզի Աստվածամոր տաճարում պետք է լինեին, բայց պարզվեց, որ վերջին անգամ այնտեղ գույքագրումը կատարվել է 1973 թվականին: Նյու Յորքի ոստիկանության տվյալներով, հափշտակումների 80 տոկոսը կատարվում է օրը ցերեկով, երբ ահազանգային ազդանշանները սովորաբար անջատված են:

Փարիզի թանգարաններից կողոպուտ կազմակերպողներից մեկի խոսքերով, *«թանգարանները հանրախանութների նման են: Դու պետք է ինքդ քեզ սպասարկես: Այնտեղից նկար թռցնելը ավելի հեշտ է, քան մի փոքր ծայներից գողանալը՝ որեւէ այլ խանութից»:* Նա Ռենուարի «Նստած կինը» կտավն էր գողացել Լուվրից՝ օրը ցերեկով:

Ժակ Սալոմոն՝ կառավարության կողմից նշանակված թանգարանների պետը Փարիզում, խոստովանում է, որ թերություններ շատ կան, բայց *«մենք չենք կարող յուրաքանչյուր նկարի կողքին մի գնդացիր դնել»*, ասում է նա:

Այլ հանցավորներ: Յուրաքանչյուր վերագտնված նկարի դիմաց տասնյակ ուրիշներն են անհետանում: Մեղավորների շարքում պետք է նշել նաեւ պետություններին: Ճիշտ է, շատ երկրներ, ինչպես օրինակ Թուրքիան, Եգիպտոսը, Իտալիան, Հունաստանը եւ ուրիշներ, ընդերքում գտնված հարստությունները համարում են պետական սեփականություն, բայց նրանք ի վիճակի չեն յուրաքանչյուր հանածոյի դիմաց վճարել այնքան, ինչքան խոստացված է: Այդ պատճառով էլ եգիպտացի գյուղացին, օրինակ, նախընտրում է իր գտած պատմական արժեք ներկայացնող իրը վաճառել Կահիրեում բնակվող իր մի ազգականին: Սա էլ իր հերթին՝ մեկ ուրիշին, սովորաբար՝ օտարերկրացու: Գյուղացին նաեւ մտավախություն ունի, թե հողատարածությունն իր ձեռքից կխլեն՝ արգելված գոտի համարելով այն:

Իսկ թանգարանների տնօրենները շատ հաճախ հրաժարվում են ընդունել «սկզբնաղբյուրի» տեսակետը, թե որ երկրին է իրականում պատկանում տվյալ իրը: Նրանք գոհանում են իրենց այցելուներին ցուցադրելով նոր իրը՝ որպես թանգարանի պարծանք: Անհատ կոլեկցիոներները նույն կերպ են վարվում: Արդյունքում, Հերակլեսի արձանի վերեւի կեսը այսօր ցուցադրվում է Բոստոնի Գեղարվեստից թանգարանում (ԱՄՆ), իսկ ներքեւի կեսը՝ Անթալիայի թանգարանում (Թուրքիա): 78-ամյա թուրք հնագետ Ժալե Ինանի ջանքերն առայժմ արդյունք չեն տալիս (նա ինքն է Պերգայում 1980 թ. հայտնաբերել այդ արձանը լրիվ կազմով): Վերջերս նա այցելել է ԱՄՆ եւ հարյուր տոկոսով համոզված է, որ երկու կեսերը միեւնույն արձանին են պատկանում: *«Հերակլեսը անհամբերությամբ սպասում է այն օրվան, երբ վերստին ամբողջական տեսք կընդունի»*, ասում է նա:

«Ոչ թե հափշտակողներին պետք է մեղադրել, այլ գնորդներին», ասում է մի այլ թուրք հնագետ՝ Ունսալ Չաքիրը:

Հռոմում հաստատված միջկառավարական մի կազմակերպություն նախագծեր է պատրաստում, որպեսզի ՅՈՒՆԵՍԿՕի միջոցով բոլոր երկրների համար ընդունելի դարձնի արվեստի արժեքների հափշտակման դեմ պայքարելու միջոցառումները: Ինտերպոլը (միջազգային ոստիկանություն) նույնպես ծրագրեր է մշակում: Սակայն անհրաժեշտ է ամենից առաջ փոխել արվեստի գիտակների մտայնությունը, որոնք գրեթե միշտ պնդում են, թե գնորդները երբեմն շատ ավելի լավ կարող են պահպանել այս կամ այն պատմական իրը, քան տվյալ երկիրը: Արվեստը աշխարհագրական սահմաններ չպետք է ճանաչի, փորձում են համոզել նրանք:

Արդյոք սա՞ նույնպես չի քաջալերում հափշտակումները, որոնք նվազելու փոխարեն ավելանում են՝ սպառնալով հոգեւոր արժեքների վերացմանը:

TIME

1990 թվականին գողացված 10 նշանավոր կտավների ցուցակում են.

1. Ռեմբրանդտի «Փոթորիկ Գալիլեայի ծովում» նկարը, 2. Վերմեերի «Համերգը», 3. Թոմաս Գեյնզբորոյի «Ուիլյամ Փիթ Ավագի դիմանկարը», 4. Դեգայի «Օրիորդ Դյուբուրգը», 5. Կարլ Սպիցվեգի «Աղքատ բանաստեղծը», 6. Ջորջիա Օ'Քիֆի «Արեւելյան գետը՝ Շելտոնից», 7. Մորուքավոր մարդու գլուխը (մ.թ.ա. 5-րդ դարի հունական արձան՝ թրծակավից պատրաստված), 8. Դեգայի «Հանգստացող պարուհին» բրոնզե արձանը, 9. Ռեմբրանդտի «Բնապատկեր՝ 3 սրածայր տանիք ունեցող հյուղակներով» նկարը, 10. Դոմ Ֆրերի «Ապակե ծաղկամանը՝ մանուշակներով»:



Վերմեերի «Համերգը»՝ 17-րդ դարի այս գլուխգործոցի անհետացումը Բոստոնի Իզաբելա Ստյուարտ Գարդների թանգարանից դեռ առեղծված է մնում:

Ինչպես լավ թերթ սարքել

ասում է «Վաշինգտոն պոստ»-ի գլխավոր խմբագիրը

Բենջամին Բրեդլին, բոստոնյան իսթեբլիշմենտի առասպելական ներկայացուցիչը, Հարվարդի համալսարանի շրջանավարտը (ինչպես հայրը, պապը եւ պապուպապը) իր յոթանասունամյակի օրը վճռեց թոշակի անցնել։ Այդ օրը դեռ երկար կհիշեն ամերիկացի եւ ոչ ամերիկացի լրագրողները, որոնք կորցնում են իրենց կորիֆեյներից մեկին։ Նրա ղեկավարության օրոք ամերիկյան մայրաքաղաքային թերթը կրկնապատկեց իր աշխատակիցների քանակը (այսօր այնտեղ աշխատում են 600 հոգի), տպաքանակը 446 հազարից հասցրեց 802 հազարի եւ ստացավ երկու տասնյակից ավելի *Պուլիցեր* մրցանակներ։ «Վաշինգտոն պոստ»-ը ուղի հարթեց դեպի նոր լրագրություն՝ առավել նախահարձակ, փաստարկված եւ անկախ, միշտ անաչառ եւ իշխանություններին չխնայող լրագրություն։

Դրա ապացույցն է 1971 թ. գերգաղտնի նյութերի հրապարակումը Վիետնամի պատերազմի մասին, «Ուոթըրգեյթյան գործի» բացահայտումը, ինչը 1974 թ. հանգեցրեց Նիքսոնի հրաժարականին, տեղեկությունները «Իրան-կոնտրաս»-ի մասին։

Ստորեւ՝ Բրեդլիի հարցազրույցը իտալական «Պանորամա» շաբաթաթերթին, որ տպագրում ենք համառոտ։

THE WALL STR
What's News
The New York Times
IRAQ DISAVOWS ANNEXATION, PLEDGING TO REPAY KUWAIT
Los Angel
In Albania, the Misery Gets Worse
The Washington Post
Baker Asks Israel for Peace Steps
Exxon Settles Sp
For $1.1 Billion

– **Լրագրողներն այսօր ավելի՞ ազդեցություն ունեն, քան քառորդ դար առաջ։**

– Չգիտեմ։ Իհարկե, հեռուստատեսությունն ավելի շատ է տիրում մտքերին, քանզի լայն հասարակայնությունը երկրում եւ աշխարհում կատարված արտակարգ իրադարձությունների վերաբերյալ առաջին տեղեկությունն ստանում է ուղիղ եթերի շնորհիվ։

– **Դուրս է գալիս, որ թերթերը երկրորդ պլա՞ն պիտի նահանջեն։**

– Ոչ մի դեպքում։ Հատկապես այնպիսի քաղաքում, ինչպիսին Վաշինգտոնն է, ուր պետք է ավելին իմանալ, քան կարող է ասել հեռուստատեսությունը։ Մի մոռացեք, որ սովորական հեռուստահաղորդման հազիվ 120 բառ է տեղավորվում։

– **Ո՞րն է ձեր հաջողության գաղտնիքը։**

– Նախ, անհրաժեշտ միջոցների առկայությունը։ Լավ թերթ սարքելու համար փող է պետք։ Երբ ես այստեղ եկա, խմբագրության բյուջեն չորս միլիոն դոլլար էր։ Այժմ այն մոտենում է 60 միլիոնին։ Եւ նույնիսկ տնտեսական անկման ներկա շրջանում բյուջեի կրճատում չենք նախատեսում։ Դրանից զատ եւս մի բան. ես միշտ վարձել եմ լավագույն լրագրողներին։

– **Ինչպե՞ս էիք նրանց ընտրում։**

– Ես երկար տարիներ այս քաղաքում լրագրությամբ եմ զբաղվել եւ լավ գիտեմ, թե ով է իսկական լրագրողը, ով՝ օճառի պղպջակ, փչված մեծություն, մարդ՝ որ ավելի շատ խոսում է, քան լսում։

– **Ինչպե՞ս եք խրախուսում լավագույններին։**

– Նախեւառաջ՝ դրամով։ Իհարկե, նաեւ բարոյապես, գովում եմ նրանց, ասում, թե թերթի հոգին են։

– **Ճի՞շտ է, որ նախապատվությունը տալիս եք հիմնականում երիտասարդ լրագրողներին։**

– Ես կյանքս կտամ հանուն իմ մի քանի հին աշխատակիցների, որոնք շատ բան են արել «Վաշինգտոն պոստ»-ի համար, սակայն լոկ վաթսունհինգ տարեկաններից կազմված թիմը բանի նման չէ։ Թերթում պիտի թարմ արյուն պտտվի։ Մենք արտասահման ենք ուղարկում 30-35 տարեկան մեր թղթակիցներին։

– **Ի՞նչ խորհուրդ կտայիք սկսնակ լրագրողներին։**

– Ավելի աշխատել, քան հարեւանը եւ քննադատաբար նայել իսթեբլիշմենթին։ Գիտակցել, որ իշխանության ղեկի մոտ կանգնած մարդիկ կարող են ստել, որ ճշմարտությանը հասնելը դժվար է։

– **Դուք առաջվա նման հավատո՞ւմ եք սենսացիային։**

– Այն էլ ինչպե՜ս։ Ես պաշտում եմ սենսացիան, ծունկ չոքում նրա առաջ։ Խելքս կորցնում եմ ինչ-որ մի բացառիկ նյութից, որի մասին հաջորդ օրը խոսելու են հեռուստատեսությամբ, գրելու են մրցակից թերթերը՝ մեջբերելով նախորդ օրվա «Վաշինգտոն պոստ»-ի թողարկումը։

– **Վերջին տարիներին սենսացիաները փոխվե՞լ են։ Արդյոք իշխանություններն ավելի խորամա՞նկ են դարձել։**

– Այժմ մրցակցությունն անհամեմատ սուր է։ Ճիշտ է, Վաշինգտոնում հիմա ավելի քիչ թերթ է լույս տեսնում, սակայն դրա փոխարեն լրագրողներն են ավելացել։ Հատկապես շատ են հեռուստաթղթակիցները։

– **Ի՞նչն էր ձեզ համար առավել դժվարը՝ Վիետնամի պատերազմի վերաբերյալ Պենտագոնի գաղտնի փաստաթղթերը հրապարակե՞լը, թե՞ Ուոթըրգեյթի սկանդալի մասին հոդվածները։**

– Ավելի դժվար էր Պենտագոնի նյութերը հրապարակելու վճիռ ընդունելը, քանզի այդ պահին հարկավոր էր մշակել թերթի վարքագիծը եւ բոլորին համոզել, որ մենք ձեռնամուխ ենք լինում առաջնակարգ լրագրության ստեղծման։ Նման քայլը կապված էր վտանգի հետ։ Այդ հրապարակումից հետո «Ուոթըրգեյթ»-ի վերաբերյալ վճիռ ընդունելը ավելի հեշտ էր։

– **Ինչպիսի՞ք են հարաբերությունները «Վաշինգտոն պոստ»-ի գլխավոր խմբագրի եւ Սպիտակ տան միջեւ։**

– Բոլորին է հայտնի, որ Սպիտակ տան հետ մենք բարեկամություն չենք անում։ Նախագահն ինձ իր մոտ չի կանչում, դա սքանչելի է։ Վերջին անգամ ես Սպիտակ տան ընթրիքի էի հրավիրված դեռեւս Քարտերի օրոք։ Ոչ Նիքսոնի, ոչ էլ Ռեյգանի օրոք ոտք այնտեղ չեմ դրել։

– **Իսկ այժմ, Բուշի օրո՞ք։**

– Ես ծանոթ էի նրա հետ, երբ նա դեռ կոնգրեսում էր։ Բուշ նախագահի հետ շատ հազվադեպ եմ խոսում։

– **Ճի՞շտ է, որ նա դժգոհ էր Մերի Մաքգրորիի առաջնորդողներից։**

– Նա ինձ դրա մասին ակնարկեց մի ճաշի ժամանակ։ Ասաց, թե իրեն բոլորովին դուր չի գալիս Մաքգրորին։ Պատասխանեցի, որ դա Մերիի համար լավագույն հաճոյախոսությունն է։

– **Ձեզ դո՞ւր է գալիս, որ ձեր լրագրողները գնում են Սպիտակ տուն ընդունելության։**

– Դա պարտադիր չէ։ Լավագույնը՝ երբ ուղղակի կարող ես զանգահարել նախագահին եւ պահանջել պատասխանել հարցերիդ։

– **Պե՞տք է ընդհանրապես այցելել քաղաքական գործիչներին։**

– Իհարկե, նրանց պետք է ճանաչել, սակայն ոչ երբեք հաշվի առնել նրանց կարծիքը։ Կարեւոր է, որ նրանք իմանան, թե ով ես դու եւ տվյալ պահին ինչո՞ւ ես հայտնվել։ Առավել կարեւոր է, որ նրանք իմանան, թե ո՞վ է «Վաշինգտոն պոստ»-ի գլխավոր խմբագիրը։

– **Հավատո՞ւմ եք լրագրողների նեղ մասնագիտացմանը։**

– Երեսուն տարի առաջ ինչ-որ մեկն ինձ ասաց, թե ապագան մասնագիտացմանն է։ Այն ժամանակ ես չհավատացի դրան, չեմ հավատում նաեւ այսօր։ Աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որ թերթը լուսաբանի կյանքի բոլոր կողմերը։ Սիրում եմ այն լրագրողներին, ովքեր կարող են ամեն ինչի մասին գրել։ Այսօր, իհարկե, կան սարսափելի բարդ թեմաներ, օրինակ բժշկությունը, դրա համար էլ պահում ենք բժշկական կրթություն ստացած լրագրողների։ Սակայն «արհմիութենական» լրագրողի մասին միտքն անգամ ինձ տհաճ է, կամ էլ զուտ մարզական լրագրողի։

– **Ինչպե՞ս է «Վաշինգտոն պոստ»-ին հաջողվում փոխել ամերիկյան հասարակական կարծիքը։**

– Մեր թերթը հասարակական կարծիքի վրա ազդում է այն պատճառով, որովհետեւ հրատարակվում է հատկապես Վաշինգտոնում, որովհետեւ մենք աշխարհի լավագույն երկու-երեք թերթերից մեկն ենք, նաեւ՝ որ մեր ընթերցողների շրջանակը խիստ լայն է. ԱՄՆ նախագահից մինչեւ հավաքարարը։ Թերթը կարդում են մարդիկ, որոնք կարող են փոխել աշխարհը։ Այն, ինչ մենք գրում ենք, ազդում է ոչ միայն ամերիկյան իսթեբլիշմենթի վրա, այլեւ աշխարհի շատ այլ թերթերի, հեռուստանորությունների վրա, իշխանության միջնաբերդի եւ այլ երկրների ղեկավարների վրա։

– **Ստացվում է, որ «Վաշինգտոն պոստ»-ի գլխավոր խմբագիրը արտակարգ հզոր անձնավորությո՞ւն է։**

– Ասում են, թե՝ այո։ Ինչ վերաբերում է ինձ, ես իսկապես այն մարդու վիճակի մեջ էի, ով ի զորու էր կանխորոշել դեպքերի ընթացքը։ Կարծում եմ, որ դա կոչվում է իշխանություն։ Սակայն սահմանափակված իշխանություն։ Օրինակի համար, տուգանքները ես չեմ կարող բեկանել։ ■

Ֆիդել Կաստրոն Խ. Միության իրադարձությունների վերաբերյալ

«Բաց թողնված սխալներն արեցին այն, ինչ ի զորու չէին ոչ Հիտլերը, ոչ էլ հակահեղափոխությունը», հայտարարեց Կուբայի առաջնորդ Ֆիդել Կաստրոն, մեկնաբանելով ԽՍՀՄ փլուզումը։ Ելույթ ունենալով առաջավոր տեխնիկայի գծով ազգային մի հավաքում՝ նա **«ցավալի»** անվանեց այն փաստը, որ այլեւս Խ. Միություն գոյություն չունի։

Մեր երկիրը, շարունակեց Կաստրոն, ոչ մի պատասխանատվություն չի կրում այդ իրադարձությունների առնչությամբ, չնայած այլ ժողովուրդների եւ, ամբողջովին վերցրած, սոցիալիզմի նման իր վրա զգում է դրա հետեւանքները։ 30 տարի մենք ծրագրեր էինք կառուցում սոցիալիստական ճամբարի եւ Խ. Միության հետ հարաբերությունների ամուր հիմքի վրա։ Ամեն ինչ փլվեց երկու տարում։ Դա սարսափելի հարված էր, որի հետեւանքով մեր արտահանությունը կրճատվեց ութից չորս միլիարդ պեսոյի։ Այժմ դժվար է Խ. Միությունում որեւէ մեկի հետ առեւտրական բանակցություններ վարել, չնայած տարեվերջին, այնուամենայնիվ, մեզ հաջողվեց առեւտրական հարաբերությունները պահպանել. **«ճիշտ է, որ մեր ապրանքների գները ընկան»**, ասաց նա։ Միաժամանակ, 1989 թ. համեմատությամբ Խ. Միությունից ըստացվեց վառելիքի սոսկ 54 տոկոսը։

«Քայքայման աստիճանը Խ. Միությունում այնքան բարձր է, որ վստահություն չկա, թե մեզ կհաջողվի որեւէ մատակարարում ստանալ այդ երկրից», ընդգծեց Կաստրոն։ Նա նշեց, որ այժմ ջանքեր են թափվում այլ երկրներից նավթ գնելու համար, չհայտնելով, թե հատկապես ո՞ր։

«Երբ նախկինում իմպերիալիստները քննադատում էին կուբայական հեղափոխությունը՝ մեզ անվանելով խորհրդային արբանյակներ, այժմ էլ քննադատում են, որ չենք անում այն, ինչ Խ. Միությունը։ Մեզ մոտ, բացատրեց նա իր միտքը, չի եղել ոչ ստալինիզմ, ոչ անձի պաշտամունք, ոչ բռնի կոլեկտիվացում, ոչ էլ իշխանության վերազանցում։ Մեր կատարած սխալներից մեկը **«Խ. Միության աստվածացումն էր»**, ինչը չի բացառում այն հսկայական երախտագիտությունը, որ մենք տածում ենք նրա նկատմամբ»։

«Մեզ համար պարզ էր, որ խոսքը սոցիալիզմի կատարելագործման մասին չէր, այլ նրա փլուզման», հայտարարեց Կաստրոն՝ գնահատելով ԽՍՀՄ-ում վերակառուցման քաղաքականությունը։ Այժմ նախկին Խ. Միությունում, **«ի հաճույս իմպերիալիստների»**, մի գլուխ խոսում են ազատ շուկայի ու սեփականաշնորհման մասին, ավարտեց իր խոսքը Կուբայի առաջնորդը։ ■

Ռուսաստանի փոխնախագահը Ելցինի հետ հարաբերությունների մասին

Ռուսաստանի փոխնախագահ Ալեքսանդր Ռուցկոյը գտնում էր, որ Բորիս Ելցինը **«հիվանդագին»** է ընդունում տնտեսական բարեփոխումների կառավարական ծրագրի դեմ ուղղված քննադատությունը։ «ԻԹ»-ին տված հարցազրույցում Ա. Ռուցկոյը համաձայնեց, որ իր դիտողությունները այդ հարցի վերաբերյալ բացասաբար են անդրադառնում Բ. Ելցինի հետ հարաբերությունների վրա։ Դրա հետ մեկտեղ, Ռուցկոյը նշեց. **«Ես ինձ չեմ հակադրում նախագահին, մեզ ընտրել է ժողովուրդը, եւ ես ուզում եմ, որ մեզ հավատան»**։

Փոխնախագահի կարծիքով, Ռուսաստանի նախարարների կաբինետի ծրագիրը **«կապ չունի կյանքի հետ եւ կարող է հանգեցնել սոցիալական պայթյունի»**։ Նրա խոսքերով, բարեփոխումները մշակվում են մարդկանց նեղ շրջանակի կողմից, առանց խորհրդարանի եւ կողմնակի մասնագետների հետ նախնական խորհրդակցությունների։ Նա առաջվա պես համոզված է, որ տնտեսական վերափոխման ուղիների տեղաշարժը կործանարար է, երբ առաջնությունը տրվում է գների ազատականացմանը, այլ ոչ թե հողային, վարկային եւ ֆինանսական բարեփոխումների իրականացմանը։ **«Հուսով եմ, որ առողջ դատողությունը կհաղթանակի»**, վերջում ասաց Ռուսաստանի փոխնախագահը։

Դեկտեմբերի 27-ին տեղի ունեցած Բ. Ելցինի եւ Ա. Ռուցկոյի անձնական հանդիպման ընթացքում, ինչպես հայտնի դարձավ, կարգավորվեցին տարաձայնությունները եւ վերացվեցին խոչընդոտները, որոնք խանգարում էին միասնական նորմալ գործունեությանը։ Այդ հանդիպումը, փաստորեն, վերացրեց Ա. Ռուցկոյի հավանական հրաժարականի մասին ասեկոսները։ Նույն օրը հայտնի դարձավ նաեւ, որ նախագահի եւ փոխնախագահի ապարատի աշխատակիցները մոտ օրերս կտեղափոխվեն Կրեմլ, ուր կլինեն Բ. Ելցինի եւ Ա. Ռուցկոյի պաշտոնական նստավայրերը։ ■

Խավիարի գինն ընկնում է

Խավիարի խորհրդային առեւտրականների տրամադրությունը բավականին մռայլ է ոչ թե նրա համար, որ բուրժուական ամենաթանկ ուտելիքը դարձել է չճարվող, այլ այն բանի, որ վտանգ է ծագել, թե այն չափից ավելի շատ է։

Այն դեպքում, երբ շաքար չկա, իսկ հացն ավելի արագ են թռցնում, քան արեւմտյան ռոք-համերգի տոմսերը, խորհրդային եւ արեւմտյան մի քանի փորձագետներ, որոնք հետեւում են խավիարի եկամտաբեր առեւտրին, երկյուղ են կրում, թե այդ նրբահամ խորտիկը օ՜հ ինչ սարսափ, ուր որ է կդառնա շատերին մատչելի։

«Դա շատ ցավալի է», ասում է Իգոր Կուկլինովը, որի մոսկովյան խորհրդասվական «Լիգա» առեւտրական ֆիրման նրան հնարավորություն է ընձեռնել Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ խավիարի առեւտրի մեջ խաղալ գլխավոր դերերից մեկը, առեւտուր, որի մենաշնորհը նախկինում պատկանում էր պետությանը։

Սովորաբար «խորհրդային» թառափը տարեկան տալիս էր մոտ երկու հազար տոննա խավիար, որից թույլատրվում էր երկրից արտահանել լոկ 150 տոննան։ Այժմյան գները ցույց են տալիս, թե ինչքան լավ էր գործում այդ վերահսկողությունը. այն դեպքում, երբ այդ բարձրորակ սեւ խավիարի կիլոգրամը պետական առեւտրում Մոսկվայում արժե 250 ռ., կամ «սեւ շուկայում» 2.5-5 դոլլար, Նյու Յորքում, ըստ խորհրդա-ամերիկյան համատեղ «Տրենմոս» ռեստորանի կառավարիչ Ջեֆրի Ցայդերի, որը Մոսկվայում բլիթների հետ մի բաժին խավիարը վաճառում է 12 դոլլարով, այդ քանակի խավիարի դիմաց հեշտությամբ կարող ես ստանալ հարյուրապատիկ շատ։

Սակայն Խ. Միության փլուզումը կարող է անեծք դառնալ թառափի համար, ասում են նրանք, ովքեր մեծ եկամուտներ են կորզում դրանից։ Մրցակցությունն արդեն սկսում է քայքայել պետության մենաշնորհը, որն իր հերթին կարող է աշխարհին տալ զզվելի ու գռեհիկ մի նոր մթերք՝ էժան խավիար։

Խորհրդային երկու խոշորագույն ձկնարդյունաբերական ձեռնարկությունները այժմ հայտնվել են տարբեր ինքնիշխան հանրապետությունների իրավասության տակ, որոնցից յուրաքանչյուրը ցանկանում է ինքը յուրացնել եւ իրացնել խավիարի արտադրության եկամտաբեր գործը։ Ռուսաստանը հավակնում է այդ բանին Աստրախանում, իսկ Ղազախստանը՝ Գուրեւում։ Ավելին, այդ եւ այլ հանրապետությունների առանձին ձկնորսներ Կասպից ծովի վրա իրենց հավակնություններն են թելադրում, որոշ դեպքերում էլ փորձում գտնել արտահանման սեփական ուղիները, ինչը պետական պաշտոնյաները համարում են «սեւ շուկայի» ծովահենություն»։

Այս ամենի արդյունքը եղավ այն, որ խավիարի պաշտոնական արտահանման գինը անցյալ տարվա համեմատությամբ ընկավ 20 տոկոսով։

«Ուոլ Սթրիթ ջորնըլ»

Բուդապեշտի թուրք դեսպանի մահափորձի արձագանքները թուրքական մամուլում եւ ԱՍԱԼԱ-ի հայտարարությունը

«Ազգ»-ի դեկտեմբերի 25-ի համարում գրել էինք դեկտեմբերի 19-ին Բուդապեշտում Թուրքիայի դեսպան Բեդրեթթին Թունաբաշի դեմ կատարված մահափորձի մասին: Հաղորդել էինք նաեւ *Ջումհուրիեթի* դեկտեմբերի 20-ի երկու տարբեր հեռագրերի բովանդակությունը, որոնցից առաջինը պարզապես հակիրճ կերպով բացատրում էր կատարվածը, իսկ երկրորդը հերքում էր թուրք դեսպանի մահվան լուրը: Հակառակ Հայաստանի ազատագրման հայ գաղտնի բանակի՝ ԱՍԱԼԱ-ի դեպքի պատասխանատվությունը ստանձնելուն, Թունաբաշը հայտարարում էր, թե *«ոչ մի գաղափար»* չունի իր դեմ *«կատարված մահափորձի հեղինակների անձի մասին»*:

Սովորաբար թուրքական մամուլը նախկինում ամբողջ էջեր էր լցնում ԱՍԱԼԱ-ի ձեռնարկած գործողության առիթով՝ համեմելով դրանք սուր եւ կծու ածականներով: Հաջորդ օրն իսկ, անկախ գործողության հաջողած կամ ձախողած լինելուց, թուրքական թերթերի առաջին էջերն անխտիր ազդարարում էին. *«Մարդասպան հայերը դարձյալ փորձեցին»*, *«Շուն հայերի հարձակումը»* եւ այլն: Սակայն այս անգամ նկատվում է «բացառիկ» երեւույթ. թուրք լրագրողները Բուդապեշտի մահափորձի առթիվ խիստ զուսպ են արտահայտվում, պարզապես՝ *«Բուդապեշտի մեր դեսպանի դեմ մահափորձ կատարվեց»*:

Անատոլիական լրատվական գործակալության դեկտեմբերի 21-ին «Միլլիյեթ»-ի տված լուրի համաձայն, դեկտեմբերի 19-ի երեկոյան, Բուդապեշտում, երբ Բեդրեթթին Թունաբաշը իր ծառայողական ինքնաշարժով մոտեցել էր բնակարանին, անծանոթ մի մարդ, հանկարծակի հայտնվելով ինքնաշարժից 2.5 մետր հեռավորության վրա, կրակել էր:

Կրակողն օգտվել էր այն առիթից, որ ինքնաշարժը բնակարան հասնելիս փողոցի անկյունը դառնալու համար դանդաղեցրել էր արագությունը: Փամփուշտներից չորսը կպել էին ինքնաշարժի ետեւի մասին, ուր Թունաբաշն էր նստած, իսկ երկուսը՝ առջեւին, ուր թիկնապահն էր:

Թուրքական թերթերից տեղեկանում ենք նաեւ, թե ծառայողական ինքնաշարժի հակափամփուշտային լինելու պատճառով կրակոցներից ոչ մեկը նպատակին չի հասել, թե Թունաբաշը, թե վարորդը, թե թիկնապահը փրկվել են մահից: Դեսպանի ինքնաշարժը դեպքի վայրից մեծ արագությամբ մտել է տուն, իսկ դեսպանատան պաշտպանության աշխատակիցները, հակառակ իրենց ջանքերի, չեն կարողացել հասնել կրակողի ետեւից: Դեկտեմբերի 22-ին, դարձյալ «Միլլիյեթ»-ի 6-րդ էջում կային նույն լուրի մանրամասնությունները՝ հետեւյալ վերնագրով. «Հարձակվողը Միջին Արեւելքից է», տակը՝ մանր տառերով՝ «Դեսպան Թունաբաշի վրա հարձակումը դարձյալ ստանձնվեց ԱՍԱԼԱ-ի կողմից»: Թերթը գրում է, որ Բուդապեշտի թուրքական դեսպանատան մամուլի կցորդ Քենան Թեփեդելեն հայտնել է, թե ըստ Թունաբաշի տվյալների, հարձակվողը կարճահասակ էր եւ բեղեր ուներ: Բոլորովին հունգարացու նման չէր, ավելի շուտ հիշեցնում էր միջինարեւելցու: Թեփեդելենն ավելացնում է, թե կրակողն օգտագործել է 7.65 մմ չափի ատրճանակ:

Ըստ նրա, սա անակնկալ էր, քանի որ նախապես ոչ մի կազմակերպությունից որեւէ նախազգուշացում կամ սպառնալիք չէին ստացել: Հունգարիայում երկրորդ անգամն է, որ այսպիսի մի դեպք է պատահում: Առաջինը՝ 1980 թվականին էր, երբ կոլումբիացի մի դիվանագետ անհասկանալի պատճառներով հարձակման էր ենթարկվել:

Քենան Թեփեդելենը, ավարտելով իր խոսքերն, ասել է, թե *«հունգարական ոստիկանությունը տարբեր վարկածներ ունի մահափորձի հեղինակների վերաբերյալ եւ շատ չի կասկածում PKK-ին»*:

Մյուս կողմից, մեզ հայտնի դարձավ, որ Հայաստանի ազատագրման հայ գաղտնի բանակը՝ ԱՍԱԼԱ-ն, դեկտեմբերի 20-ին պատրաստել էր մի հաղորդագրություն, ուր ասվում էր, թե *«իրենք ստանձնում են նահատակ Սուրիկ Գրիգորյանի անվան զինյալ ջոկատի իրագործած «Սասուն» գործողության ամբողջ պատասխանատվությունը, որը կատարվեց Հունգարիայում Թուրքիայի դեսպան, գործակալ Բեդրեթթին Թունաբաշի դեմ դեկտեմբերի 19-ին, տեղական ժամով ժամը 18.10-ին, մայրաքաղաք Բուդապեշտում»*:

Հաղորդագրության մեջ ասվում է նաեւ, թե *«այս զինյալ գործողությունը քաղաքական հենքով զինյալ գործունեությունների շարունակությունն է, որը մղվում է մեր ազատագրական պայքարի ընդմեջից, թուրքական ֆաշիստական եւ ոճրագործ պետության ու նրա դաշնակիցների դեմ՝ 1975-ից սկսած»*:

«Թունաբաշի դեմ իրականացված պատժիչ գործողությունը կրկնակի կարեւորություն ունի», այնուհետեւ շարունակում է հաղորդագրությունը, *«որովհետեւ նա կապի պահպանման հիմնական օղակներից մեկն էր Արեւելյան Եվրոպայի տարածքում թուրքական հետախուզական ծառայության՝ MIT-ի եւ Ադրբեջանական ԿԳԲ-ի միջեւ, որոնք ձեռք ձեռքի շարունակում են իրենց ցեղասպանության քաղաքականությունը հայ ժողովրդի եւ Հայաստանի դեմ մասնավորապես, Արցախում»*:

Հայաստանի ազատագրման հայ գաղտնի բանակը հայտարարում է, թե իրենք մի անգամ եւս առիթ ընծայեցին բոլոր նրանց, ովքեր քաղաքական լուծումներ են առաջարկում իրավազրկված ժողովուրդների անլուծ դատերին, վերականգնելու հայ ժողովրդի իրավունքները, սակայն ինչպես միշտ, երբ հայությունը դիմում է խաղաղորեն իր իրավունքները պահանջելու քայլին, բախվում է միջազգային ընտանիքի անտարբերությանը եւ թուրքական ֆաշիստական պետության անբարտավան քաղաքականությանը, որ մարտահրավեր է կարդում ոչ միայն հայությանը, այլեւ սահմանակից բոլոր ժողովուրդներին՝ նկրտելով իրականացնել պանթուրքիստական իր գաղափարները՝ ընդհանրապես Միջին Արեւելքի, հատկապես Կովկասի ու Բալկանների վրա տարածելով ազդեցության իր թաթերը, քաջալերվելով աշխարհին «խաղաղություն» ավետող իր դաշնակիցներից:

«Հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների՝ հայկական բռնագրավյալ հողերի վերատիրացման եւ հայոց ցեղասպանության նահատակներու արյան հատուցման արդար հարցը չի կարող անտեսվել, ոչ էլ սակարկվել, ասվում է հաղորդագրության մեջ: *Ազատագրման պայքարի ձեռնարկումը պարտադրված է հայությանը, որովհետեւ իրողությունն այն է, որ բոլոր այլեւայլ բազմիցս փորձված միջոցները ապարդյուն են»*:

Մահափորձի դրդապատճառները եւ օտար գնահատականները, այնուամենայնիվ, դեռեւս մնում են անորոշ:

Պատրաստեց
ՌԱՖՖԻ ՀԵՐՄՈՆ ԱՐԱՔՍԸ



Նկարը «Միլլիյեթ»-ից, 22 դեկտ.

«Այբ-Բեն-Գիմ» բարեգործականի նվերը ծնողազուրկ երեխաներին

Երեւանի «Այբ-Բեն-Գիմ» բարեգործական միությունը, դեկտեմբերի 29-ին, մեկ օրով հյուրընկալեց Սպիտակից եւ Գյումրիից եկած շուրջ 150 ծնողազուրկ դպրոցահասակ երեխաների, ինչպես եւ նրանց դաստիարակներին:

Երեխաները մասնակցեցին Ամանորյա տոնահանդեսներին, դիտեցին «Հայք» մշակութային միության կենտրոնի «Դերասանի թատրոն»-ի անդրանիկ ներկայացումը, ուր եւ Կաղանդ պապից ու Ձյունանուշից ստացան նվերներ: Գյումրիից եկած երեխաները Ֆրանց Վերֆելի անվան դպրոցի սաներն էին: Դպրոցի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Հայկազ Հակոբջանյանը հայտարարեց, որ իրենք երկրորդ տարին է, ինչ մասնակցում են «Այբ-Բեն-Գիմ»-ի Ամանորյա այս միջոցառմանը եւ գոհ են ինչպես միության, այնպես էլ նրա նախագահ Յուրի Վարդանյանի ջերմ վերաբերմունքից: Դպրոցի 300 սաներից 140-ը երկրաշարժի ժամանակ որբացած կամ հաշմանդամ դարձած երեխաներ են: ■

Կարճամիտ լուրեր

- Ալմա-Աթայում ընկեր Ստալինին փոխարինեց ընկեր Ակցությունը:
- Անկախության գործընթացն ավարտված է: Հիմա մենք առկախ ենք:
- Տեղի ունեցավ գյուղբանտարկյալների հավաք Բերիայի անվան կոլխոզում:
- Լեռ Կամսարի անվան կոմեդիայի թատրոնում տեղի ունեցող Սար Կամլեռի «Նահանջ առանց զենքի» ֆարսի պրեմիերան:
- Մանկական Չունիվերմակի կողքին բացվեց Կարաբալայի հուշարձանը, որը սոցմրցության կոչ է անում շուկայական ծաղկավաճառներին:
- Ինս ապահովագրական գործակալությունը արժեզրկված ռուբլիներով ձեր մուծած գումարների դիմաց խոստանում է հետագայում վճարել էլ ավելի արժեզրկված դրամանիշներով:

Նոր տարվա հակաշուկայական հանձնարարականներ

- Տոնակատարությանը տարկետում ոչ մի դեպքում:
- Կազմակերպել ամանորյա նախկին հանդիսությունների հուշերի երեկո:
- Հեռուստատեսությունից պահանջել մինչեւ 61 տարեկան երեխաների համար ամանորյա հին վավերագրական կինոժապավենների ցուցադրում:
- Երեխաներին սովորեցնել հետեւյալ ոտանավորը՝

  «Ձմեռ պապին մեռել է,
  Մեզի ավանդ թողել է՝
  Փոքրիկ բալեք, մեծացեք,
  Իրար կերեք, կշտացեք»:
- Թույլ չտալ, որ կարմիր գայլն ուտի եռագույն գլխարկին:

Ձմեռ պապի հասցեն չկրճատելու համազգային շարժման առաջնորդ,
Նորին քերականություն՝ Վարուժան ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Քրիստոնյա եկեղեցիներն անհանգստանում են

Մութ եւ ցուրտ սենյակներում բնակվելու հետեւանքով Հայաստանի բնակչության շրջանում աննախադեպ կերպով աճել է կրակապաշտների թիվը:

ՀՀ Առողջապահության նախարարությունն զգուշացնում է

Կտրոնների վրա նշված չափից ավելի կարագ, բրինձ, շաքար, ձավարեղեն, միս, հավկիթ ուտելը վտանգավոր է ձեր առողջության համար:

Հովսեփ ՎԱՆՈՒՆՑ

Ռուսաստանը նախկին ԽՍՀՄ-ի շարունակողն է

Ռուսաստանի ղեկավարությունը հիմք է ընդունում այն, որ Ռուսաստանյան Ֆեդերացիան հանդիսանում է նախկին ԽՍՀՄ-ի շարունակողը: Ինչպես հաղորդեցին «Դիվանագիտական համայնապատկեր»-ի թղթակցին Ռուսաստանի արտգործնախարարությունում, ներկա պահին Ընկերակցության անդամ բոլոր 11 անկախ պետությունները համարվում են նախկին Միության ժառանգորդները: Սակայն Ռուսաստանը, ինչպես ճշգրտեց բարձրաստիճան դիվանագետներից մեկը, «յուրահատուկ դիրք է զբաղեցնում եւ ԽՍՀՄ-ը շարունակող պետությունն է»:

Ելնելով դրանից, բոլոր 10 անկախ պետություններին անհրաժեշտ է համաշխարհային հանրության կողմից ճանաչումը: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նա միջազգային ճանաչման կարիքը չունի, քանի որ խոսքը գնում է «ինքնին հասկանալի հասկացության մասին»: Հենց այդ հիման վրա Ռուսաստանը ինքնաբերաբար ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում կզբաղեցնի ԽՍՀՄ-ի տեղը:

Ռուսաստանի խորհրդարանը որոշում ընդունեց նախկին ԽՍՀՄ-ի ժողպատգամավորների վերաբերյալ: Որոշման մեջ ասվում է, որ պատգամավորների գործունեությունը Ռուսաստանի տարածքում ավարտվում է 1992 թ. հունվարի 2-ից, ինչպես նաեւ իրենց ուժն են կորցնում նախկին ԽՍՀՄ-ի նորմատիվ ակտերը:

Ռուսաստանի պատգամավորներին, որոնք աշխատում էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մշտական հանձնաժողովներում եւ կոմիտեներում, կտրվի հնգակի աշխատավարձի չափով գումար: ■

Ուկրաինան Ռուսաստանի կողմից գների ազատականացմանը հակադրվում է ռուբլին դուրս մղելով

Երկուշաբթի օրվանից Ուկրաինայում սկսվել է ուկրաինական շուկայից ռուբլին աստիճանաբար դուրս մղելու ծրագրի իրականացումը: Եռօրյա նիստերից հետո Ուկրաինայի Նախարարների խորհուրդը հինգշաբթի օրը վերջնական որոշում ընդունեց Ռուսաստանի կողմից հունվարի 2-ից հետո գների ազատականացման կապակցությամբ պատասխան միջոցների վերաբերյալ:

Երեկվանից Ուկրաինայում շրջանառության մեջ են դրվում բազմակի օգտագործման կուպոններ: Աշխատավարձի մի մասը տրվելու է կուպոններով (ենթադրվում է, որ հունվարին 40-50 տոկոսը), մնացածը՝ ռուբլիներով: Աստիճանաբար աշխատավարձը ամբողջովին կվճարվի կուպոններով: ■

Երկաթուղայինները դիմում են ԱՊՀ-ի ղեկավարներին

Նախկին ԽՍՀՄ-ի երկաթուղիների 22 ղեկավարները կոչ արեցին ԱՊՀ-ի երկրների ղեկավարներին՝ պահպանել երկաթուղային տրանսպորտի կենտրոնացված ղեկավարման գործող համակարգը: Երկաթուղայինները պնդում են, որ նրա լուծարքը անխուսափելիորեն կջլատի ընկերակցության երկրների ամբողջ տրանսպորտային համալիրը:

Հեռագրում նրանք գրում են, որ տասնյակ տարիների ընթացքում կատարելագործված երկաթուղային ցանցը կատարում է ամբողջ տրանսպորտային համալիրի փոխադրումների 80 տոկոսը եւ գործում է որպես միասնական տեխնիկական եւ տնտեսական մեխանիզմ: ■

Օղու եւ երշիկի բունտեր

Դեկտեմբերի 27-ին մոտ 150 մոսկվացիներ մեկ ժամի չափ փակեցին երթեւեկությունը քաղաքի կենտրոնական մագիստրալներից մեկի՝ Տվերսկայա փողոցի վրա: Նրանք օղի էին պահանջում խանութներից մեկում՝ Ելիսեեւսկայա գաստրոնոմում: Այն բանից հետո, երբ եկավ օղու շշեր բարձած մեքենան, ցուցարարները շարվեցին հերթի:

Նույն օրը Սանկտ-Պետերբուրգի 200 բնակիչ, վրդովված այն բանից, որ խանութում վերջացավ երշիկը, մոտ մեկուկես ժամ փակեցին Նեւսկի պողոտայի երթեւեկությունը: Նրանք պահանջում էին նաեւ մթերքները վաճառել պետական գներով:

Պերմում նույնպես մի քանի տասնյակ մարդ նույն օրը քաղաքի կենտրոնում փակեցին ճանապարհը՝ պահանջելով սննդամթերքների վրա նշանակել պետական գներ, բարելավել դրանց մատակարարումը: ■

Լուրերը՝ Interfax-ի եւ մեր սեփ. թղթակիցների

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010
Խմբագիր՝ Յ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
& Macintosh համակարգչային շարուածքը
Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնի
ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր
«Պարբերական» հրատ. տպարան, Արշակունեաց 2